«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2016

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի (այսուհետ՝ ԵԹԿՊԻ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 3 տեղացի և 2 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, ինչպես նաև միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 17

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 17

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 23

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 26

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 30

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 34

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 39

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 42

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 44

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 48

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 55

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵԹԿՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 63

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը բեմարվեստի, թատերագիտության, կինոգիտության, կինոարվեստի և մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական ոլորտի հաստատություն է, որի հիմնական առաքելությունը բարձրագույն կրթության բոլոր մակարդակներով խաղարկային մշակութային կրթություն ապահովելն է, ինչպես նաև գիտելիքի և մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, փոխանցումը և տարածումը կրթության և մշակութային զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտն ունի 3 մասնաճյուղ, 4 ֆակուլտետ և 13 մասնագիտություն: Ուսանողների թիվը մայր բուհում 800 է, իսկ մասնաճյուղերում՝ 216: Ուսուցումն ընթանում է առկա և հեռակա ձևով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով: Բուհում կազմակերպվում է նաև հետբուհական կրթություն: Բուհը մասնաճյուղեր ունի Գյումրիում, Վանաձորում, Գորիսում:

Բուհի ներկայիս Ռազմավարական ծրագիրը հաստատվել է 2012թ. և ընդգրկում է ԵԹԿՊԻ-ի առաքելությունը, 2013-2017թթ.-ի համար նախատեսված նպատակները, խնդիրները և դրանց իրագործման քայլերը: Բուհի կողմից անցկացվող հարցումները ցույց են տալիս, որ ներքին և արտաքին շահակիցները ԵԹԿՊԻ-ի գործունեությամբ բավարարված են:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար մեխանիզմ են հանդիսանում ռեկտորի հաշվետվությունները, բարելավման համար անհրաժեշտ մեխանիզմներ և ընթացակարգեր դեռևս չկան:

ԵԹԿՊԻ կառուցվածքն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը: Բուհն իրականացնում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, սակայն պլանների իրականացումը չի մշտադիտարկվում, մշտադիտարկման մեխանիզմները բացակայում են: Որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) դեռևս ամբողջապես ներդրված չէ:

Պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը, լինելով բեմարվեստի, կինոարվեստի, հեռուստատեսության ոլորտների աշխատակիցներ, մասնակցում է բուհի կողմից անցկացվող հարցումներին, ինչով մասամբ լրացվում է բուհի վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմների բացակայությունը:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

ԵԹԿՊԻ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները հիմնականում համապատասխանում են առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին: ՄԿԾ-ները ֆորմալ մշակված են ըստ ուսումնառության արդյունքների: Բուհը որդեգրել է ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն, սակայն ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցում (alignment) դեռևս չի կատարվել: Բուհը դեռևս չի համակարգել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմները և ընթացակարգեր:

Բուհն ունի ուսանողների հավաքագրման մշակված մեխանիզմներ: Բակալավրի մակարդակում ԵԹԿՊԻ-ի ուսանողների ընդունելությունն իրականացվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի: ԵԹԿՊԻ-ում կրթությունը հիմնականում իրականացվում է արվեստանոցների և անհատական պարապմունքների միջոցով, ինչը արդյունավետ ուսուցումից բացի հնարավորություն է տալիս ուսանողներին բարձրացնել իրենց հուզող խնդիրները: Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության նպատակով անցկացվում են նաև հարցումներ: Վերհանած խնդիրները կուրսղեկները բարձրացնում են ամբիոնների նիստերում և հնարավորության դեպքում լուծվում: Ուսանողները ներգրավված են բուհի կառավարման խորհուրդներում, ցանկացած պահի կարող են դիմել ուսումնական և վարչական աշխատողներին: Ուսանողական ինքնակառավարման գործընթացները և ուսանողների իրավունքների պաշտպանությունն ապահովում է ինստիտուտի ուսանողական խորհուրդը:

Բուհը կրթական ծրագրերն իրականացնելու համար ապահովված է անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: ԵԹԿՊԻ-ն անցկացնում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ: Բուհն ունի ուսումնական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ թվաքանակի և որակավորում ունեցող ուսումնաօժանդակ անձնակազմ, որի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ են վերապատրաստումներ:

Թեպետ ՊԴ կազմի մի մասը հետազոտական աշխատանքներ կատարելիս ներգրավում է ուսանողներին, սակայն այդ աշխատանքները համակարգված չեն: Հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները ձևակերպված չեն: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները բացակայում են:

ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար: Բուհը հիմնականում ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, լսարանային պայմաններ, հագեցված գրադարան, ֆիլմադարան, արվեստանոցներ և լաբորատորիաներ: Դրամաշնորհային ծրագրերով ստեղծվել են մասնագիտացված լաբորոտորիաներ, անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով հագեցված տաղավարներ: Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը լրամշակման կարիք ունի: Առողջապահական և անվտանգության

պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ԵԹԿՊԻ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր, սակայն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքները հաշվի չեն առնվում:

Հաշվետվողականության սահմանված կարգ չունենալով հանդերձ, բուհում գործում է ներքևից-վերև տարեկան հաշվետվությունների ներկայացման համակարգ: Բուհի կողմից սոցիալական ցանցերի կիրառումը զգալիորեն նպաստում է բուհում իրականացվող գործընթացների թափանցիկությանը: Հասարակական պատասխանատվության ոլորտում որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է:

Թեպետ բուհը կարևորում է միջազգայնացումը և, մասնավորապես, եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական, գիտական ոլորտներում համագործակցությունը, ինչպես նաև օտարերկրյա ուսանողների համակազմի մեծացումը, սակայն նշված խնդիրների ուղղությամբ շոշափելի արդյունքներ և հաջողություններ դեռ չեն գրանցվել: Միջազգային համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է վարպետաց դասերի կազմակերպմամբ, բացակայում է ուսանողների և դասախոսների շարժունությունը:

2014թ. հոկտեմբերից ԵԹԿՊԻ-ն անդամակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների բարձրագույն կրթական միջազգային ցանցին: Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության արդյունավետության գնահատման մեխանիզմները մշակված չեն:

Թեպետ ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է 2011 թվականին, սակայն որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Որակի ապահովման քաղաքականությունը հստակ ձևակերպված չէ, սահմանված չեն որակի ներքին ապահովման ընթացակարգերը: Կենտրոնը ներկայում ինստիտուտի թույլ օղակն է և այն վերակազմակերպելու լուրջ կարիք ունի, հատկապես մարդկային ռեսուրսների տեսանկյունից: ԵԹԿՊԻ-ի ներքին և արտաքին շահակիցները բավարար չափով չեն մասնակցում որակի ապահովման գործընթացներին, իրականացվող գործընթացների գնահատման համար մեխանիզմներն ու գործիքները ձևավորման փուլում են: Որակի ապահովման համակարգի կողմից արտաքին գնահատման համար ստեղծված հիմքերն անբավարար են: Որակի ապահովման ներքին համակարգը ԵԹԿՊԻ-ի գործունեության որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն չի տրամադրում և չի ապահովում բուհի գործունեության թափանցիկությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ԵԹԿՊԻ-ի կրթական գործընթացի կազմակերպման ուժեղ կողմ է հանդիսանում այն, որ կիրառական բնույթի մասնագիտական դասընթացները հիմնված են կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման վրա (problem based learning), ինչը զգալի նպաստում է ուսանողակենտրոն մոտեցմամբ ուսուցմանը:
2. ԵԹԿՊԻ-ն Երևանում և մարզերում կազմակերպում է միջոցառումներ, որոնք ուղղված են ուսանողների հավաքագրմանը և մասնագիտական կողմնորոշմանը:
3. Բուհում առկա է կուրսերի մասնագիտական ղեկավարների ինստիտուտը, ինչը հանրավորություն է տալիս վերհանել և հետագայում քննարկել ամբիոններում և ավելի բարձր ատյաններում ուսանողների մասնագիտական և անձնական խնդիրները:

4. Բուհի ուսանողները ակտիվ են, գիտակցում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ունեն մոտիվացիա բուհը որակյալ դարձնելու և ձգտում՝ որակյալ կրթություն ստանալու:
5. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը բեմարվեստի, կինոարվեստի, հեռուստատեսության ոլորտների աշխատակիցներ են, ինչի շնորհիվ ապահովվում է բուհ-աշխատաշուկա կապը:
6. Կինոարվեստի ոլորտի մասնագիտություններն ապահովված են ժամանակակից ռեսուրսային բազայով:
7. Գործատուները պատրաստ են աջակցելու բուհին բոլոր հարցերում՝ դահլիճներ և այլ ռեսուրսներ տրամադրելու, իրենց փորձը փոխանցելու, ինստիտուտի կյանքում մասնակցություն ունենալու և այլն:

Հաստատության թույլ կողմերն են.

1. **ԵԹԿՊԻ-ի թույլ կողմերից է գործունեության հետազոտական բաղադրիչը: Իրականացվող հետազոտությունները չեն համակարգվում, չի կարևորվում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումը:**
2. **Թույլ է ԵԹԿՊԻ-ի միջազգայնացումը՝ կրթական ծրագրերի, ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման ու հետազոտության ոլորտներում:**
3. Որակի ապահովման կենտրոնը ամբողջությամբ չի իրականացնում իր գործառույթները, զգացնել է տալիս կենտրոնի աշխատակիցների փորձի պակասը:
4. Բացակայում են ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմները:
5. Ոչ բոլոր դասախոսներն են ներգրավված բուհում իրականացվող բարեփոխումներին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1. Կանոնակարգել ռազմավարական ծրագրի մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման գործընթացները, հստակ սահմանելով ռազմավարական ծրագրի մշակման և քննարկումների փուլերը, պատասխանատուները, շահակիցները ու դրանց մասնակցությունը, ՌԾ-ի իրականացման մշտադիտարկման, արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները, ընթացակարգերը և գործիքները:
2. Վերանայել ՌԾ-ի ժամանակացույցը առավել տրամաբանորեն սահմանելով նպատակներին հասնելու համար անհրաժեշտ քայլերը, հստակ նշելով դրանց իրականացման համար հարկավոր ռեսուրսները և վերջնարդյունքները (կատարողականի ցուցիչները (KPI)):

Կառավարումն ու վարչարարությունը

3. Բուհի ֆինանսական ծախսերի նախահաշիվը կազմել ՌԾ-ի նպատակների իրականացման համար նախատեսված քայլերին համապատասխան: Դա հետագայում նաև կդյուրացնի ըստ նպատակների իրականացված ծախսերի արդյունավետության գնահատումը:

4. ԵԹԿՊԻ-ի ստորաբաժանումների պլաններում հաշվի առնել նախատեսված քայլերի (գործողությունների) իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները:
5. Մշակել և ներդնել մեխանիզմներ, որոնք կապահովեն խորհուրդներում ներգրավված դասախոսների և ուսանողների կապը բուհի դասախոսական և համապատասխանաբար ուսանողական համակազմերի հետ:
6. Մշակել բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության գործիքներ և ընթացակարգեր:
7. Ակտիվացնել բուհի ջանքերը որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք ներդրման ուղղությամբ:
8. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ ու գործիքակազմ:
9. Բուհի կառավարման համակարգում ապահովել Որակի ապահովման կենտրոնի առավելագույն անկախություն:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Բենչմարքինգ իրականացնել նաև Եվրոպական բուհերի համապատասխան ՄԿԾ-ների հետ, հատուկ ուշադրություն դարձնելով ուսումնառության արդյունքների ձևակերպմանը:
11. Իրականացնել ՄԿԾ-ների ուղղահայաց[2] և հորիզոնական[3] համաձայնեցում (alignment):
12. Մշակել բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման հստակ չափանիշներ:
13. Մշակել ձևավորող գնահատման և ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ:
14. Քայլեր ձեռնարկել ընդհանուր-հումանիտար և տեսական դասընթացներն ուսանողակենտրոն մոտեցումներով կազմակերպելու ուղղությամբ:
15. Քայլեր ձեռնարկել միջազգայնացման և Եվրոպական ուսումնական հաստատությունների հետ ուսանողների և դասախոսների շարժունության ուղղությամբ:

Ուսանողները

16. Ներդնել բակալավրի կրթական ծրագրով ուսանողների ընդունելության ներքին կարգ, որում կսահմանվեն արվեստի բուհի յուրահատկություններով պայմանավորված ներքին քննությունների անցկացման գործընթացը:

---

[2] Ուղղահայաց համաձայնեցումը ենթադրում է ՈԱՇ-ի և ՄԿԾ-ի, ինչպես նաև ՄԿԾ-ի և դասընթացների/մոդուլների մակարդակներում սահմանված ուսումնառության արդյունքների համապատասխանությունը արտացոլող սկզբունքների, ընթացակարգերի և գործիքների մշակում և ներդրում:

[3] Հորիզոնական կամ կոնստրուկտիվ համաձայնեցումը ենթադրում է յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի համար սահմանված ուսումնառության արդյունքների ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության մեթոդների, և նախանշված ուսումնառության արդյունքները գնահատելու մեթոդների ընտրության մեթոդաբանության, ընթացակարգի և գործիքների մշակում և ներդնում:

17. Մագիստրատուրայի ընդունելության ներքին կանոնակարգում ներառել բուհի մասնագիտությունների առանձնահատկություններից բխող լրացուցիչ պահանջներ և/կամ չափանիշներ:
18. Հստակեցնել ուսանողներին մատուցվող բոլոր կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների համակարգը, մշակել դրանց գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

19. Բուհում իրականացվող յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:
20. Մշակել դասալսումների իրականացման, արդյունքների վերլուծության և դրանց կիրառման հստակ չափանիշներ և ընթացակարգեր:
21. Մշակել և ներդնել պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան դասավանդողների կատարելագործմանն ուղղված հստակ գործընթացներ:
22. Մշակել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման, մասնավորապես գիտահետազոտական գործունեության և միջազգային համագործակցության զարգացման հստակ պլան:

Հետազոտությունը և զարգացումը

23. Վերանայել բուհի 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը՝ «Հետազոտություններ և նորարարություններ» և «Միջազգային համագործակցություն» ռազմավարական նպատակներում մանրամասն նկարագրելով հետազոտական ոլորտում ԵԹԿՊԻ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, ինչպես նաև հետազոտությունների զարգացմանն ու դրանց միջազգայնացմանն ուղված հստակ գործողությունները:
24. Մշակել մեխանիզմներ բուհում իրականացվող հետազոտական գործունեության համակարգման համար:
25. Մշակել ԵԹԿՊԻ-ի հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր:
26. Գիտական հետազոտությունների իրականացմանն աջակցելու համար բուհի բյուջեում առանձին տողով հատկացնել ֆինանսավորում:
27. Քայլեր ձեռնարկել գիտական հետազոտությունների համար արտաքին ֆինանսավորման աղբյուրներ հայթայթելու ուղղությամբ (Գիտության պետական կոմիտեի կողմից հատկացվող թեմատիկ ֆինանսավորում, միջազգային դրամաշնորհային ֆինանսավորում և այլն:)
28. Ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

29. Բուհի տարեկան բյուջեն կազմել ըստ ՌԾ-ի յուրաքանչյուր նպատակի իրականացման համար տվյալ տարում նախատեսված գործողությունների համար անհրաժեշտ ծախսերի:

30. Մեծացնել ուսումնական գործընթացի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պահպանման և զարգացման համար նախատեսվող ֆինանսավորումը:
31. Մշակել և ներդնել տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:
32. Հաջորդ տարվա բյուջեում հնարավորության սահմաններում նախատեսել հատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար համապատասխան միջավայր ձևավորելու աշխատանքներ (հաշմանդամների համար հարմարեցված աստիճանավանդակներ և զուգարան):
33. Մշակել ենթակառուցվածքների և ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ և գործիքներ:

Հասարակական պատասխանատվությունը

34. Մշակել հասարակության առջև ԵԹԿՊԻ-ի հաշվետվողականության ապահովման մեխանիզմները և գործիքակազմը նկարագրող փաստաթուղթ:
35. Մշակել ԵԹԿՊԻ-ի գործունեության վերաբերյալ հասարակությունից տեղեկատվություն ստանալու՝ հետադարձ կապի մեխանիզմներ և գործիքներ:
36. Ուսումնասիրել հասարակությանը գիտելիքների փոխանցման գործող մեխանիզմների արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում դրանք վերանայել: Հաշվի առնելով վերանայման արդյունքները, մշակել գիտելիքների փոխանցման մեխանիզմները և ընթացակարգերը սահմանող փաստաթուղթ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

37. Մշակել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ռազմավարություն և գործողությունների հստակ պլան:
38. Մշակել տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության արդյունավետությունը գնահատող համակարգ:
39. Միջոցառումներ կազմակերպել ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգը

40. Մշակել որակի ապահովման ձեռնարկ, որում ընդգրկված կլինեն՝ որակի ներքին ապահովման նպատակները և ուղղությունները, հիմնական շահառուները, ՈԱ մեխանիզմները և գործիքակազմը:
41. Որակի ապահովման կառույցը համալրել բարձր մասնագիտական կարողություններով օժտված աշխատակազմով:
42. Վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների համար կազմակերպել որակի ապահովման գծով վերապատրաստումներ:
43. Մշակել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների, մասնավորապես՝ ուսանողների ներգրավման մեխանիզմներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դիտարկումներ

Տվյալ փուլում ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են նրա որդեգրած առաքելությանը: ՄՈՒՀ-ը իր գիտահետազոտական գործունեությունը և միջազգային հարաբերությունները պետք է զարգացնի այն երկրների հետ, որոնք ներգրավված են Բոլոնյան գործընթացում:

Փորձագիտական այցի ընթացքում մենք չտեսանք ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման ու բարելավման բավարար մեխանիզմներ և ընթացակարգեր: Ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնը ձևավորման փուլում է: Առանց տվյալ ստորաբաժանման վերջնական ձևավորման՝ մշտադիտարկումը գործնականում անհնար կլինի, ինչը կարող է հավելյալ դժվարություններ ստեղծել հաջորդ ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում:

ՄՈՒՀ-ի կառավարումը հստակ ձևավորված համակարգ է, վարչական պաշտոնների միջև գործառույթները ճիշտ են բաշխված, սակայն այն հիմնականում համապատասխանում է կրթական հաստատությունների կառավարման սովետական մոդելին: Նյութատեխնիկական բազան բավականին զարգացած է, հատկապես՝ կինոյի բաժնում և բավարարում է ուսումնական գործընթացի կարիքները:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը: Դասախոսական կազմի և ուսանողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ կա ուղղակի շփման հնարավորություն: Բացի այդ, ինստիտուտը ստեղծագործաբար է մոտենում տարբեր առաջարկների և նախաձեռնությունների ընդունման հարցին: Ինստիտուտի ներսում կա մի արկղ, որտեղ բոլորը անանուն նամակների միջոցով կարող են իրենց կարծիքը հայտնել կրթական և վարչական գործընթացների վերաբերյալ: Հանդիպումները ցույց տվեցին, որ դասախոսները և ուսանողները ազատորեն փոխանակվում են քննադատական և ստեղծագործական հարցերով՝ համատեղ ուժերով լուծելով դրանց հետ կապված խնդիրները:

Պլանավորումը պետք է ավելի համահունչ լինի Բոլոնիայի գործընթացին, որում կարևոր է տարբեր խնդիրների մշտադիտարկման հարցը: Քանի որ Որակի ապահովման կենտրոնը դեռևս կայացման փուլում է, հետևաբար այս գործընթացները դեռ նոր են զարգանում: Որակի ապահովման կենտրոնը պետք է հավաքագրի, մշակի ինստիտուտում իրականացվող գործընթացների մասին տեղեկատվությունը և տարածի այն հետադարձ կապի համար: Դա վարչական անձնակազմին հնարավորություն կտա ճիշտ գնահատել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների իրականցման վիճակը և հարկ եղած դեպքում կատարել շտկումներ:

ՄՈՒՀ-ը ներկայումս քիչ է կիրառում պարբերական հարցումների էլեկտրոնային համակարգը, որը նպաստում է հարցվողների օբյեկտիվության բարձացմանը և թույլ է տալիս ավելի պրոֆեսիոնալ հաշվարկել ստացված արդյունքները:

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմները բավարար չեն: Կազմակերպվող գիտաժողովները և հրապարակումները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Անհրաժեշտ է օրինակ ծանոթանալ «Չիկագո ոճին», անանուն մեթոդով հղում կատարելուն և այլն:

Կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը և երկրում գործող օրենսդրությանը, սակայն ամբողջովին չեն արտացոլում Բոլոնյան գործընթացի առանձնահատկությունները: Առկա կրթական ծրագրերը համապատասխանում են օրենսդրությանը և պետության կողմից սահմանված պահանջներին, համաձայն որոնց՝ պետության կողմից սահմանված պարտադիր առարկաները մեծաքանակ են և չեն բավարարում կոնկրետ որակավորման կարիքները: Ցանկալի է, որ կրթական ծրագրերը ավելի համահունչ լինեն Բոլոնյան գործընթացի պահանջներին:

Փորձագիտական այցի ընթացքում ՄԿԾ-ների դիտարկումը տպավորություն ստեղծեց, որ ուսումնառության վերջնարդյունքների համակարգում կան մեծ քանակությամբ պարամետրեր: Ուսումնառության վերջնարդյունքները պետք է լինեն ավելի հակիրճ և համահունչ Եվամիության երկրների չափանիշներին ու փորձին:

Ինստիտուտը դեռևս ուսանողների ու դասավանդողների շարժունությանը նպաստող գործունեության իրականացման փուլում է և այս ուղղությամբ դեռ շատ անելիքներ ունի:

ՄՈՒՀ-ը դեռևս չի որդեգրել մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն: Այդ խնդիրը պետք է լուծվի Որակի ապահովման կենտրոնի զարգացմանը զուգընթաց:
Ինստիտուտը պետք է որդեգրի և իրականացնի Բոլոնիայի փորձը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսները քննություններն անց են կացնում հարցաթերթիկների միջոցով և չեն կիրառում ժամանակակից մեթոդներ: Հարցաթերթիկների միջոցով քննություն անցկացնելու այդ հին ձևը հակասում է Բոլոնյան գործընթացի էությանը:

ՄՈՒՀ-ը փորձում է աջակցել ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, սակայն դեռևս չունի ներգրավելու հստակ մեխանիզմ, քանի որ գիտահետազոտական աշխատանքը ընդհանուր առմամբ նոր ուղղություն է ինստիտուտի համար և պետք է մշակվի հաջորդ ռազմավարական ծրագրում:

ՄՈՒՀ-ը պետք է մեծ ուշադրություն դարձնի առկա ծառայությունների և հնարավորությունների մասին ուսանողներին իրազեկելու գործընթացների ճիշտ պլանավորման վրա: Ակնհայտ է, որ ինստիտուտը մեծ ցանկություն ունի խթանելու ուսանողների ակտիվությունը:

ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Ինստիտուտն ունի մեծաքանակ պրոֆեսորադասախոսական կազմ:

Չնայած այն բանին, որ գոյություն ունի դասախոսներին պարբերաբար գնահատելու հնարավորություն, գնահատման չափանիշները, այնուամենայնիվ, մշակված չեն:

Ինստիտուտը պետք է պահպանի դասախոսական կազմի տարիքային հավասարակշռությունը: Դոկտորների կարիք կա ինչպես կիրառական, այնպես էլ տեսական ուղղությունների համար: Ընդհանուր առմամբ, ինստիտուտը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին, որը, սակայն, ոչ միշտ է համապատասխանում Բոլոնյան գործընթացի սկզբունքներին:

Ներկայում ամբիոնների վարիչներն են պատասխանատու գիտահետազոտական աշխատանքների համար, մինչդեռ այն պետք է լինի յուրաքանչյուր դասախոսի նպատակն ու խնդիրը, այլ ոչ թե ամբիոնի: Որակի ապահովման կենտրոնը պետք է կազմի գիտական ծանրաբեռնվածության հստակ ուղեցույց: Բացակայում է գիտահետազոտական պլանավորման և ինքնազարգացման ոլորտում դասախոսների գործառնության հստակ ընկալումը:

Չնայած գիտահետազոտական գործունեությունը նոր ուղղություն է ինստիտուտի համար, այնուամենայնիվ, յուրաքանչյուր դասախոսի համար այն պետք է լինի պարտադիր, ինչպես ուսուցման գործընթացն է: Հատկապես մագիստրատուրայում դասախոսները չունեն հստակ տեսական՝ ուսուցման գիտահետազոտական բաղադրիչի վերաբերյալ: Բացակայում են այնպիսի կարևոր առարկաներ, ինչպիսիք են ակադեմիական գրելառճը և հետազոտության մեթոդները:

Ստեղծագործական մասնագիտությունների բազմազանությունը շատ լավ է բաշխված կենտրոնի և մասնաճյուղերի միջև: Գյումրու մասնաճյուղ այցը բավականին հետաքրքիր էր մարզերում դերասանների պատրաստմանը ծանոթանալու տեսանկյունից: Ֆինանսները բաշխվում են ըստ անհրաժեշտության, սակայն լավ կլիներ ներդնել ներքին դրամաշնորհային համակարգ տարբեր ուղղությունների զարգացման համար: Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր կետ համապատասխանում է չափորոշիչների պահանջներին:

Չնայած ինստիտուտի գործունեության համապատասխանությանը ռազմավարական պլանի խնդիրներին՝ որոշ թերություններ կան PR ծառայության գործունեություն մեջ: Այս ոլորտը պետք է լինի ավելի լավ մտածված, ծրագրված և փաստաթղթավորված:

ՄՈՒՀ-ը պարբերաբար մասնակցում է պետական և կառավարական ծրագրերին: Նրա գործունեությունը լուսաբանվում է հեռուսատեսությամբ, ռադիոյով և մամուլում: Սակայն ինստիտուտի PR-ը պետք է ավելի ակտիվ գործունեություն ծավալի: Ինստիտուտի նոր կայքը բազմազան է, լավ կառուցված, սակայն ոչ ամբողջությամբ է կիրառվում. չկա ընդհանուր էլ-հասցեների ցուցակ, էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության տարածում և այլն:

Այս փուլում լուրջ խնդիրներ կան միջազգայացման հետ կապված. ինստիտուտի թույլ օղակը միջազգային հարաբերություններն են: Չնայած միջազգային հարաբերությունների կենտրոնի գոյությանը, պայմանագրերի և հուշագրերի առկայությանը՝ ինստիտուտի կապը Բոլոնյան գործընթացի փորձ ունեցող հաստատությունների հետ բացակայում է: Միջազգային նախագծերի և փոխանակումների

թիվը չնչին է: Ինստիտուտի ներգրավածությունը միջազգային մասնագիտական ցանցերին շատ թույլ է: Օտար լեզվի իմացության խնդիրն առանցքային է:

Որակի ապահովման կենտրոնի ստեղծումը կրթական համակարգի նոր էլեմենտ է, սակայն անհրաժեշտ և ավանդական տարր՝ Բոլոնյան գործընթացում: ՄՈՒՀ-ում ներկայումս ձևավորվում է Որակի ապահովման կենտրոնը: Դրա ստեղծումը բավականին երկար ժամանակ, ջանքեր և գիտելիքներ է պահանջում: ՄՈՒՀ-երի մեծամասնությունը բախվում է այս խնդրին: Բոլոնյան գործընթացում կրթական ծրագրերի, չափորոշիչների, հետազոտության պայմանների բոլոր առանցքային հարցերը, ինչպես նաև ՄՈՒՀ-ի նախապատրաստումը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հավատարմագրմանը, իրականացվում է Որակի ապահովման կենտրոնի կողմից:

ՈԱԿ-ը ներկայումս ինստիտուտի թույլ օղակն է և այն վերակազմակերպելու լուրջ կարիք կա, հատկապես մարդկային ռեսուրսների տեսնակյունից: Կենտրոնի ղեկավարի հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ նա չուներ բավարար հմտություններ ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցերում:

ՄՈՒՀ-ի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը թույլ են զարգացած: Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը չի տրամադրում բավարար քանակությամբ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: Որակի ներքին ապահովման համակարգը ձևավորման փուլում է: Որակի ապահովման ներքին համակարգը բավարար չափով չի ապահովում ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը և չի տրամադրում ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցներին:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ ինստիտուտի մյուս բաժիններն ավելի ակտիվ մասնակցություն են ունեցել ինքավերլուծության պատրաստման հարցում, քան Որակի ապահովման կենտրոնը:

Խորհրդատվություն

1. Առաքելության նկարագրությունը պետք է լինի հստակ և հակիրճ: Որակի ապահովման կենտրոնը պետք է ակտիվորեն ներգրավված լինի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում:
2. Անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել շնորհվող որակավորումների անվանումների թարգմանությանը: Դրանք պետք է համապատասխանեցվեն Եվրամիության անդամ երկրներում շնորհվող գիտական կոչումներին (օրինակ՝ performing arts, այլ ոչ թե՝ dramatic art; theatre studies, այլ ոչ թե drama studies etc.):
3. ՄՈՒՀ-ի նպատակը պետք է լինի սեփական հրապարակումների միջազգայանցումը: Այդ նպատակով պետք է ներառել անգլերեն լեզվով հրապարակումներ, ինչպես նաև դրանց ընտրության և գրախոսության միջազգային կանոններ:
4. Ինստիտուտը պետք է ավելի շատ ինտեգրվի Եվրամիության կրթական համարգում և կազմակերպի վերապատրատումներ վարչական և դասախոսական կազմի համար՝ օգտագործելով միջազգային ֆինանսավորման հնարավորությունները:

5. Ելնելով «Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգից՝ կարելի է ասել, որ 2.2 գնահատման բաղադրիչում վերջնական քննության 50, 60, 70 միավորները բավականին բարձր են: Ըստ Բոլոնիայի համակարգի՝ այն պետք է լինի 40–ից ցածր, որպեսզի տարբեր բաղադրիչներ հավասարակշռեն միմյանց, և դրանցից յուրաքանչյուրը կարևոր լինի վերջնական գնահատման համար:
6. Ինստիտուտի ծրագրերը եվրոպական համալսարանների ծրագրերին համահունչ դարձնելը կնպաստի միջազգային շարժունության հնարավորությունների բարձրացմանը:
7. Ուսանողների գիտական կազմակերպության անհրաժեշտություն չկա (դա նրանց որոշումն է), սակայն հետազոտությունը պետք է կազմի ուսումնական պլանի մի մասը, ինչպես նաև անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդաբանություն:
8. Անձնակազմի մշտադիտարկման և գնահատման համար նպատակահարմար է անցկացնել հարցումներ և կիրառել Որակի ապահովման կենտրոնի ու գիտական խորհրդի կողմից հաստատված ցուցիչներ, ինչպես նաև ինքնավերլուծությունը:
9. Բոլոնյան գործընթացի սկզբունքների որդեգրման համար լավ կլինի հրաժարվել ամբիոնների համակարգից և անցնել «ծրագրի ղեկավար» համակարգին (կոլեկտիվ պատասխանատվությունից անցում կատարել անհատական պատասխանատվության):
10. Ցանկալի է կիրառել հիմնական և հրավիրված դասախոսների համակարգը և ամենժամյա ծանրաբեռնվածությունից անցում կատարել տարեկան ծանրաբեռնվածության: Կրեդիտային համակարգը հնարավորություն է տալիս ճշգրիտ պլանավորել ուսումնական տարին:
11. Հաշվի առնելով թույլ կողմերը և խնդիրները՝ հաստատությունն անձնակազմի համար պետք է կազմակերպի վերապատրաստումներ և սեմինարներ՝ հրավիրելով տեղացի և միջազգային փորձագետներ:
12. Ցանկալի կլիներ, որպեսզի ինստիտուտը կիրառեր Բոլոնյան համակարգի փորձը՝ պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական դասախոս հրավիրելով արտասահմանյան մասնագետների: Սա կնպաստի ոչ միայն դասախոսական կազմի կատարելագործմանը, այլև ուսանողների և դասախոսական կազմի օտար լեզուների իմացության մակարդակի բարձացմանը, որը ևս մեկ քայլ է դեպի միջազգայնացումը:
13. Հետազոտական գործունեությունը պետք է լինի դասախոսի տարեկան գործունեության պարտադիր մասը, ինչպես բոլոր եվրոպական համալսարաններում: Այն պետք է կազմի բակալավրի և մագիստրոսական ծրագրերի մի մասը: Հետազոտական նախագծերը պետք է ներառվեն դասախոսների առարկայական ծրագրերում:
14. Գիտահետազոտական գործունեությունը պետք է հիմնված լինի միջառարկայական մոտեցման վրա:
15. Միջֆակուլտետային հետազոտական կենտրոնի կամ ինստիտուտի ստեղծումը կարող է լավ հնարավորություն ընձեռնել հետազոտական նախագծերի զարգացման համար:
16. Կարևոր է մշակել միասնական հետազոտական և կրթական ծրագրեր, օրինակ՝ միասնական մագիստրոսական և ասպիրանտական:

17. Հետազոտական նախագծի համար ֆինանսների հայթայթումը կարող է կազմել ուսումնական պլանի կառավարման մի մասը՝ ըստ ուսանողների ECTS-ի:
18. Օգտագործել ֆինանսների հայթայթման նոր միջոցներ՝ բարեգործություն, հովանավորություն և այլն:
19. Ինստիտուտը կարող է իր անձնակազմի, այսպես կոչված, «դեմքերին» օգտագործել որպես հասարակության հետ կապերի պահպանման միջնորդներ: PR ծառայությունը պետք է ստեղծի բոլոր աշխատակիցների, ուսանողների, ինչպես նաև շրջանավարտների և բոլոր շահագրգիռ անձանց էլ-հասցեների ցուցակ: Անհրաժեշտ է ամեն օր ուղարկել տեղեկատվություն ինչպես արդեն պլանավորված, այնպես էլ ընթացիկ միջոցառումների, ֆինանսավորման հնարավորությունների, դրամաշնորհների, միջազգային գիտաժողովների, ծրագրերի և այլնի մասին:
20. Շատ կարևոր է եվրամիության մասնագիտական ցանցերի հետ կապերի հաստատումը, քանի որ դրանք ունեն Բոլոնյան գործընթացների մեծ փորձ:
21. Ինստիտուտը պետք է ավելի լավ օգտագործի միջազգային և Եվրամիության ընձեռած հնարավորությունները, ինչպիսիք են Արևելյան գործընկերությունը, Horisont 2020, Erasmus կամ այլ ծրագրերը:
22. Ցանկալի է, որ ինստիտուտը մեծ ուշադրություն դարձնի որակի ապահովման կենտրոնի զարգացման վրա՝ պարբերական վերապատրաստումների, ինչպես նաև միջազգային փորձագետների ներգրավման միջոցով, հատկապես այն երկրներից, որտեղ այս հարցերը արդեն լուծված են:

Փորձագիտական խմբի ղեկավար

7 սեպտեմբերի 2016 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Մկրտիչ Այվազյան**, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, խմբի ղեկավար, Հայաստան:
2. **Լևան Խեթագուրի**, Թատերագիտության դիպլոմավորված մասնագետ, արտասահմանյան թատերագիտության թեկ. թատրոնի ոլորտում, Կովկասյան բազային հիմնադրամի նախագահ, փորձագիտական խմբի անդամ, միջազգային փորձագետ, Վրաստան:
3. **Յուրի Մգեբրիշվիլի**, Արվեստների և մշակույթի հետազոտության ինստիտուտի դասախոս, մշակույթի կառավարման, քաղաքականության հետազոտական կենտրոնի ղեկավար, Մշակույթի կառավարման ծրագրերի մագիստրոս, Իլյաի պետական համալսարանի դասախոս, գիտ. թեկ. Մշակույթի կառավարման ոլորտում, փորձագիտական խմբի անդամ, միջազգային փորձագետ, Վրաստան:
4. **Գեղեցիկ Գրիգորյան**, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ, Հայաստան:
5. **Միշա Թադևոսյան**, ՀՊՄՀ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի անդամ, Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ինստիտուտի հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է **Անահիտ Ութմազյանը**:

Թարգմանությունը կատարել է **Լիլիթ Մուրադյանը**:

Արձանագրությունները կազմել է **Լիլիթ Զաքարյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամներն ու քարտուղարը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

«Երևանի թատրանի և կինոյի պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2015թ. դեկտեմբերի 15-ին դիմել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար՝ ներկայացնելով դիմում-հայտը, լիցենզիայի և դրա հավելվածների ու հրամանների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը հավատարմագրման կարգի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները, կից փաստաթղթերը և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

ԲՈՒՀ-ի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա կազմվել և հաստատվել են հավատարմագրման գործողությունների ժամանակացույցն ու գործընթացի ծախսերի նախահաշիվը: 2015թ. դեկտեմբերի 25-ին կնքվել է պայմանագիր ՈԱԱԿ-ի և ԵԹԿՊԻ-ի միջև:

Նախապատրաստական փուլ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ինքնավերլուծության անգլերեն ու հայերեն տարբերակները և հավելվածների փաթեթը ներկայացվել են ՈԱԱԿ 2016 թ. փետրվարի 2-ին: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՈԱԱԿ-ը հիմք ընդունելով Հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը 2016 թ.մարտի 1-ին կայացրել է որոշում ինքնավերլուծության զեկույցը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն ընդունելու մասին:

Ինքնավերլուծությունը հիմնականում լրացված է ճշգրիտ և յուրաքանչյուր չափորոշիչ հաշվի է առնված: Հավելվածներում առկա են փաստաթղթում տեղ գտած ձևակերպումների բավարար ապացույցներ:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ ներկայացված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ԵԹԿՊԻ-ի մասին տեղեկատվություն ձեռք բերելու և բուհի հետ քննարկումներ կազմակերպելու համար:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով: 2016 թ. մարտի 22-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին: Գնահատումն իրականացվել է 2016 թ. մարտի 22-ից մինչև 2016 թ. մայիսի 13-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ժամանակամիջոցում փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ, շաբաթը մեկ անգամ պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետների կողմից վերհանված խնդիրները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում:

Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրները և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկումներ, այցելություններ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Նախնական այց

2016 թ. մայիսի 5-ին համակարգողը, փորձագիտական խմբի ղեկավարն ու ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարն այցելել են ԵԹԿՊԻ քննարկելու և համաձայնեցնելու փորձագիտական այցի ժամանակացույցը[4]: Նախնական այցի ընթացքում ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները, քննարկվել են նաև այլ կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր, դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը փորձագիտական խմբի տեղացի փորձագետները հանդիպել են միջազգային փորձագետների հետ: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրս բերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1) համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**, 2) համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2016 թ. հունիսի 16-20-ն ընկած ժամանակահատվածում:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով:

Տեղի են ունեցել հանդիպումներ ամբիոնների վարիչների, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների, առկա և հեռակա ուսուցման ձևերով սովորող, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով: Ժամանակացույցով նախատեսված և հայտարարված բաց հանդիպման շրջանակում փորձագիտական խմբի հետ հանդիպելու ցանկություն էին հայտնել համալսարանի մի

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

շարք աշխատակիցներ՝ դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչներ, ներհամալսարանական բաժինների, կենտրոնների ղեկավարներ:

Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական խումբը մայիսի 19-ին այցելեց Գյումրի՝ ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղ, որտեղ հանդիպումներ ունեցավ մասնաճյուղի տնօրենի, վարչական և ուսումնական կազմի, ուսանողների, դասախոսների հետ, ուսումնասիրեց ռեսուրսները, դիտեցին մասնաճյուղի առաջին և ավարտական կուրսերի ուսանողների ներկայացումները:

Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[5] և ռեսուրսների դիտարկում[6], դիտել է դերասանական բաժնի ուսանողների դիպլոմային ներկայացումը, կինոարվեստի ֆակուլտետի ուսանողների նկարահանած որոշ ֆիլմեր:

Այցի ժամանակացույցով նախատեսված հանդիպումները բավականին լավ էին կազմակերպված հաստատության անձնակազմի կողմից: Այդ իսկ պատճառով խումբը կարողացավ տեղավորվել այցի համար նախատեսված ժամանակացույցի սահմաններում:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպումների մասնակիցների բաց քննարկումները: Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված փորձագիտական խմբի ամփոփիչ հանդիպման ժամանակ: Խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խումբի ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ փաստերի վերհանման, դատողությունների և գնահատականի ձևավորման գործում, ինչպես նաև արձագանքել են ամբողջական տարբերակին: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Միջազգային փորձագետները պատրաստել են իրենց եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Երկու փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետների կարծիքը և մոտեցումները զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[6] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է, և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է ինստիտուտ 2016թ. հուլիսի 15-ին:

Համակարգող
7 սեպտեմբերի 2016թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի թատերական ինստիտուտը հիմնադրվել է 1944 թվականին և ունեցել է երեք բաժիններ՝ դերասանական, ռեժիսորական, թատերագիտական: 1952թ. միավորվում են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները և ստեղծվում է Գեղարվեստա-թատերական միացյալ ինստիտուտը, որը 1994թ. բաժանվում է 2 առանձին բուհերի՝ Գեղարվեստի պետական ակադեմիայի և Թատերական արվեստի ինստիտուտի: 1999 թվականին բուհի մասնագիտական ոլորտն ընդլայնվել է և այն վերանվանվել է «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ»: Այսօր մեր ինստիտուտում ուսուցումը կարող է ընթանալ 13 մասնագիտությունների և բազմաթիվ մասնագիտացումների գծով: Բուհում դասավանդում են հանրապետության մշակույթի և արվեստի առաջատար գործիչները, ովքեր ունեն նաև միջազգային համարում՝ ժողովրդական արտիստներ, միջազգային փառատոների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ. թվով 35 պրոֆեսոր, 33 դոցենտ, 67 ավագ դասախոս, 74 դասախոս (առ 16 հունվար,2016թ.):

Կրթություն. ԵԹԿՊԻ-ն ըստ ինքնավերլուծության նախատեսում է ուսումնասիրել և ճշգրտել բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերը՝ ելնելով եվրոպական ծրագրային չափանիշներից և ազգային մշակույթի առանձնահատկություններից: Գնահատել բոլոր կրթական ծրագրերը համապատասխան մեթոդներով և չափանիշներով: Մշակել կրթական ծրագրերի համար չափելի գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որակավորման աստիճանների և մասնագիտությունների ելքային կրթական արդյունքները:

Իրականացնել դասախոսական կազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի: Կազմակերպել դասախոսների վերապատրաստում կրթական բարեփոխումների պահանջների լույսի ներքո: Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:

Զարգացնել ԵԹԿՊԻ-ում ներդրված ֆինանսական պլանավորման համակարգը, ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու նպատակային բաշխումը: Նպատակաուղղել ԵԹԿՊԻ-ի հետագա ծախսային քաղաքականությունը բուհի առջև ծառացած և կենսական կարևորություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը, իսկ տարեկան հասույթը ուղղել ինստիտուտի զարգացմանը և աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանը: Մշակել և ներդնել ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ:

Հետազոտություն. Համաձայն ինքնավերլուծության և ՌԾ-ի նախատեսվում է ապահովել գիտական ստեղծագործական և հետազոտական աշխատանքների և կրթական գործընթացի ինտեգրումը և դրա միջոցով բուհի առաջընթացը: Ձևավորել գիտական և

ստեղծագործական կենտրոններ՝ ուսումնական ծրագրերում նորարարական գիտելիքների ու փորձի արդյունավետ օգտագործման ու տարածման նպատակով: Բարձրացնել ուսանողների գիտահետազոտական գործունեության արդյունավետության որակը: Ընդլայնել ինստիտուտի գիտական համագործակցությունը գործընկեր բուհերի հետ: Մշակել համատեղ գիտահետազոտական նախագծեր:

Միջազգայնացում. ԵԹԿՊԻ-ի միջազգայցնացման կարևորագույն նպատակն է միջազգային համագործակցության արդյունքում բարելավել կրթական ծառայությունների և ստեղծագործական գործունեության որակը, ինստիտուտիի մրցունակությունը միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել ինստիտուտիի շրջանավարտների պահանջարկվածությունը և մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում, բարձրացնել ինստիտուտի միջազգային հեղինակությունը կինոյի,թատրոնի դերասանների, ռեժիսորների, կինոգետների և թատերագետների պատրաստման գործում:

ԵԹԿՊԻ-ի միջազգայնացման առաջնահերթություններն են.

- Առաջատար բուհերի հետ միջազգային համագործակցության ընդլայնում:
- Ուսանողների, դասախոսների, շարժունության ապահովում:
- Միջազգային գիտամշակութային և դրամաշնորհային ծրագրերում մասնակցության:

Որակի ապահովում. Ինքնավերլուծության և Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգի համաձայն ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնի առաքելությունն է խաղարկային արվեստների ոլորտի համար մասնագիտական կադրերի պատրաստման գործընթացում որակի մշակույթի ձևավորումը: Հիմնական նպատակներն են.

- որակի ապահովման ներքին համակարգի ստեղծումը, ներդրումը, ղեկավարումը և բարելավումը,
- որակի ապահովման ներքին համակարգի և ստորաբաժանումների մշտադիտարկման և վերլուծական գործընթացներին աջակցելը,
- որակի ներքին ապահովման համակարգի նորմատիվ-մեթոդական ապահովում, փաստաթղթավորում, առաջավոր փորձի ներդրումը:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

<u>1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:</u>

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը բեմարվեստի, թատերագիտության, կինոգիտության, կինոարվեստի և մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական եզակի հաստատություն է, որի հիմնական առաքելությունը բարձրագույն կրթության բոլոր մակարդակներով խաղարկային մշակութային կրթություն

ապահովելն է, ինչպես նաև գիտելիքի և մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, փոխանցումը և տարածումը կրթության և մշակութային զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

2013-2017թթ Ռազմավարական ծրագրում ձևակերպված է ԵԹԿՊԻ-ի առաքելությունը, նպատակները, խնդիրները և դրանց իրագործման քայլերը:

ԵԹԿՊԻ-ի 2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակներն են.

1. Կրթական գործունեության զարգացում և կատարելագործում
2. Ուսանողական համակազմի ձևավորում
3. Ուսանողների հետ տարվող աշխատանք
4. Ռազմավարական գործակցություն և միջազգային համագործակցություն
5. Ֆինանսատնտեսական գործունեության զարգացում
6. Բարձրակ դասախոսական կազմ և կադրային ներուժ
7. Հետազոտություններ և նորարարություն
8. Կազմակերպչական և կառավարման որակի զարգացում
9. Սոցիալական ոլորտի զարգացում
10. Հասարակության հետ կապերի համակարգում PR գործունեություն:

ԵԹԿՊԻ-ն ունի «Գործողությունների կատարման պլան», որում սահմանված են ռազմավարական պլանում բերված խնդիրներից բխող քայլերի իրականացման ժամկետները, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսները և ակնկալվող «վերջնարդյունքները»:

Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխան ԵԹԿՊԻ-ն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի հիմնական կրթական ծրագրերով:

Թատրոնին և կինոյին առնչվող կրթական ոլորտում ինստիտուտը բավարարում է երկրի պահանջները և պատրաստում է կադրեր ոչ միայն Երևանում, այլ նաև այլ մարզերում գտնվող մասնաճյուղերում:

ԵԹԿՊԻ ունի 3 մասնաճյուղ՝ Գյումրիում, Վանաձորում և Գորիսում, որոնց օգնությամբ ապահովում է տեղական մակարդակում ամրապնդելու աշխատաշուկա-բուհ համագործակցությունը, ինչպես նաև խթանելու ՀՀ Կառավարության գործունեության ծրագրով ամրագրված՝ մարզերի համաչափ զարգացմանը:

<u>1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:</u>

ԵԹԿՊԻ-ի 2013-2017թթ. Ռազմավարական ծրագիրը մշակելիս որքանով են վերհանվել ու արտացոլվել ներքին և արտաքին շահակիցների կարիքները՝ պարզ չէ, քանի որ չկա ՌԾ-ի մշակման հաստատված ընթացակարգ: Սակայն 2013-2014թթ. ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և վարչական աշխատակազմի շրջանում անցկացվել են հարցումներ կրթության բովանդակության և կազմակերպման արդյունավետության վերաբերյալ: Հարցումների արդյունքում բացահայտված խնդիրները հաշվի են առնվել ստորաբաժանումների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանները մշակելիս:

Այցի ընթացքում ներքին (ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակիցներ) և արտաքին (շրջանավարտներ, գործատուներ) շահակիցների հետ հանդիպումներից

պարզվեց, որ նրանք տեղեկացված են ՌԾ-ի հիմնադրույթների վերաբերյալ և ԵԹԿՊԻ-ի գործունեությամբ բավարարված են:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵԹԿՊԻ առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմ են հանդիսանում ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք կազմվում են բուհի բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հիման վրա: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները ներկայացվում են ինստիտուտի խորհրդի քննարկմանն ու գնահատմանը: Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման համար անհրաժեշտ այլ մեխանիզմներ և ընթացակարգեր դեռևս չեն գործում:

Դատողություններ

ԵԹԿՊԻ-ն ունի սահմանված և հրապարակված առաքելություն և ռազմավարական նպատակներ, որոնք, ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: ՌԾ-ի 10 նպատակները կարելի է բաշխել ըստ բուհի գործունեության հետևյալ ուղղությունների.

1. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ 4-րդ, 5-րդ և 8-րդ նպատակներ
2. Կրթության կազմակերպում՝ 1-ին և 6-րդ նպատակներ
3. Հետազոտությունների իրականացում՝ 7-րդ նպատակ
4. Հանրությանը մատուցվող ծառայություններ՝ 2-րդ, 3-րդ, 9-րդ և 10-րդ նպատակներ:

Ներքին և արտաքին շահակիցները ծանոթ են ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին ու խնդիրներին և ԵԹԿՊԻ-ի գործունեությամբ բավարարված են:

Ինստիտուտում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանը միտված մեխանիզմ է ռեկտորի տարեկան հաշվետվությունը: Սակայն այն անարդյունավետ է կիրառվում, քանի որ հաշվետվությունները չեն կազմվում ըստ ռազմավարական նպատակների, ինչը դժվարացնում է առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման մշտադիտարկումը, գնահատումը և բարելավման քայլերի պլանավորումը: Տարեկան գործունեության ընթացիկ մշտադիտարկման այլ մեխանիզմներ մշակված չեն:

Բուհում իրականացվում են խաղարկային արվեստի և հարակից բնագավառների կրթական ծրագրեր բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում, ինչը համապատասխանում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին և ԵԹԿՊԻ-ի առաքելությանը:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ռազմավարական ծրագրի նպատակները բխում են առաքելությունից և ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, բուհում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ին և բխում են ԵԹԿՊԻ-ի առաքելությունից, ինչպես նաև այն, որ բուհը գիտակցում է ռազմավարական ծրագրի մշտադիտարկման և գնահատման

մեխանիզմների թերի լինելը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

<u>2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:</u>

ԵԹԿՊԻ-ի կառավարումը իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ ԵԹԿՊԻ-ի Խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի կողմից: Կառավարման բարձրագույն մարմինը՝ 24 անդամից կազմված ԵԹԿՊԻ-ի Խորհուրդն է, որն ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը ձևավորվում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Խորհրդի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը: Խորհուրդը հաստատում է ԵԹԿՊԻ-ի ռազմավարական ծրագիրը և բյուջեն, ընտրում ռեկտորին, գնահատում է ԵԹԿՊԻ-ի գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվությունը: Այսինքն Խորհուրդը պատասխանատու է ռազմավարական պլանի հաստատման և դրա կատարման ընթացքի միջնաժամկետ և երկարաժամկետ մշտադիտարկման (հաշվետվությունների ընդունման) համար: Ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են Գիտական խորհուրդը և ռեկտորը: ԵԹԿՊԻ-ի Գիտական խորհուրդը կազմված է 40 անդամից և ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհրդի նախագահը ի պաշտոնե ռեկտորն է: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են նաև պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, ԵԹԿՊԻ-ի այլ վարչական, դասախոսական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներ: Գիտական խորհրդի անդամների թվի առնվազն 25%-ը ուսանողներ են՝ ներառյալ ուսխորհրդի նախագահը: Այսպիսի կառավարման համակարգը ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը:

Բուհի կառուցվածքը և մարդկային ռեսուրսները՝ վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմը կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար հիմնականում բավարար են: Նյութական և ֆինանսական ռեսուրսները բավական են ինստիտուտում իրականացվող ուսումնական գործընթացներն ապահովելու համար:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ներքին շահակիցները, մասնավորապես պրոֆեսորադասապոսական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչները ներգրավված են ԵԹԿՊԻ-ի խորհրդում և Գիտական խորհրդում: ԵԹԿՊԻ-ի խորհրդի 25% կազմում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները և 25% ուսանողների ներկայացուցիչները: Խորհուրդներում ներգրավված դասախոսները և ուսանողները հիմնականում արտահայտում են ՊԴ կազմի և ուսանողության կարծիքը:

Ներքին շահակիցները կառավարման վրա կարող են ազդել նաև անուղղակի՝ որակի ապահովման շրջանակներում կատարվող հարցումներին մասնակցելու, ԵԹԿՊԻ-ի կայքէջում կարծիքներ թողնելու միջոցով:

ԵԹԿՊԻ-ում գործում է Արհմիություն, որի ներկայացուցիչը ներգրավված է գիտական խորհրդում և իր անդամների շահերն է պաշտպանում նրանց իրավունքները ոտնահարող որոշումներից:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ի երկարաժամկետ և միջնաժամկետ պլանավորումը արտացոլված է 2013-2017թթ. ՌԾ-ի ժամանակացույցում: ԵԹԿՊԻ-ի կարճաժամկետ պլանավորումը իրականացվում է վարչական և ուսումնական ստորաբաժանումների տարեկան պլանների կազմման միջոցով: Սակայն ստորաբաժանումների պլանավորումը կանոնակարգված չէ՝ որոշ ստորաբաժանումներ տարեկան պլանավորումը իրականացնում են օրացույցային տարով, իսկ որոշները՝ ուսումնական, ընդվորում ուսումնական տարով իրականացվող պլանների մի մասը սկսվում է օգոստոսից, իսկ մյուսը՝ սեպտեմբերից: Տարեկան պլանավորումն իրականացվում է ստորաբաժանումների կողմից: Պլաններում բացակայում են կատարողականի ցուցիչները (KPI): Չեն սահմանվում տարեկան պլանների իրականացման համար ստորաբաժանումներին անհրաժեշտ ռեսուրսները: Երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման իրականացման և մշտադիտարկման մեխանիզմները բացակայում են:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԵԹԿՊ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության հիմնական մեխանիզմ է հանդիսանում այն, որ բեմարվեստի, կինոարվեստի, հեռուստատեսության ոլորտների տարբեր կազմակերպությունների աշխատակիցները, որոնց հիմնական մասը այդ բուհի շրջանավարտներն են, դասավանդելով ինստիտուտում, ապահովում են շրջանավարտ-գործատու-պրոֆեսորադասախոսական կազմ հետադարձ կապը:

Ըստ ինքնավերլուծության ԵԹԿՊԻ-ի արտաքին և ներքին միջավայրի վերլուծության համար կիրառվում են նաև «SWOT վերլուծության մոտեցումներ, հարցախույզեր և հարցումներ, ֆոկուս խմբեր, շահակիցների հետ քննարկումներ, վիճակագրական

տվյալների վերլուծություն»: Սակայն որոշումների կայացման պրակտիկան ոչ միշտ է հիմնվում հավաքագրված տվյալների վրա: Տեղեկատվության հավաքագրման և մշակման մեթոդները և գործիքակազմը դեռևս ներդրվում են:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԵԹԿՊԻ-ն իրականացնում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում ռազմավարական պլանի ժամանակացույցի և բուհի ստորաբաժանումների տարեկան պլանների միջոցով: Սակայն ստորաբաժանումների տարեկան պլանները ՌԾ-ից հիմնականում չեն բխում: Ուսումնական գործընթացի կազմակերպման համար որպես գործողությունների պլան հաճախ դիտարկվում են իրականացվող ՄԿԾ-ների ուսումնական պլանները: Տարեկան պլանների մանրամասն ուսումնասիրությունից և այցի ընթացքում կատարված հանդիպումների արդյունքներից կարելի է եզրակացնել, որ իրենց գործունեության ընթացքում ստորաբաժանումները տարեկան պլաններով հաճախ չեն առաջնորդվում: Ստորաբաժանումների կողմից իրականացված գործունեության հիման վրա կազմվում են հաշվետվություններ, որոնք ամփոփելով կազմվում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը: Ստորաբաժանումների և ռեկտորի տարեկան հաշվետվությունները չեն կազմվում ըստ ՌԾ-ի նպատակների և դրանցից չի երևում ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը: Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլը դեռ ամբողջական չի գործում:

2.6 ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

2014 թ. օգոստոսին բուհում հաստատվել է «ՄԿԾ-երի մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» կարգը, որի համաձայն ԵԹԿՊԻ-ում նախատեսվել են մասնագիտությունների կրթական ծրագրի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման հետևյալ մեխանիզմները՝ դասալսումներ, ուսանողների և դասախոսների հետ խորհրդակցություններ, հարցումներ և ֆոկուս խմբեր արտաքին փորձագիտական գնահատում: Այդ մեխանիզմները ներդրման փուլում են: Դրանց վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմները դեռևս թերի են:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ բացակայում են:

Դատողություններ

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա կառուցվածքը ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնների պահպանումը: Բուհն ունի ՌԾ-ի նպատակների իրականացման համար

անհրաժեշտ ստորաբաժանումներ ու համապատասխան որակավորումներ ունեցող անձնակազմ: Ներկայումս բուհը ռազմավարական խնդիրների իրականացման համար ապահովված է անհրաժեշտ նյութական և ֆինասական ռեսուրսներով, սակայն հետագա բարեփոխումների համար ֆինանսական ռեսուրսները բավարար չեն:

Ինստիտուտը գործող խորհուրդների միջոցով սահմանում է իր ռազմավարական ծրագիրը, զարգացման առաջնահերթությունները և ուղիները, գնահատում իր գործունեությունը: Կառավարման համակարգը ուսանողներին ու դասախոսներին հնարավորություն է ընձեռում մասնակցել որոշումների կայացմանը:

ԵԹԿՊԻ-ի կառուցվածքային քարտեզում պատկերված են ԵԹԿՊԻ-ի խորհուրդները և ստորաբաժանումները, , ինչպես նաև դրանց հիերարխիան:

ԵԹԿՊԻ-ի կառուցվածքից երևում է, որ ՈԱԿ-ը գտնվում է Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխատանքների գծով պրոռեկտորի ենթակայության տակ: Դա սահմանափակում է ՈԱԿ-ի աշխատանքային շրջանակը՝ ինչպես այլ պրոռեկտորների ենթակայության տակ գտնվող ստորաբաժինների հետ համագործակցության, այնպես էլ համապատասխան պրոռեկտորի գործունեության արդյունավետությունը անկողմնակալ գնահատելու տեսակետից:

Բուհն իրականացնում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, թեպետ կարճաժամկետ պլանների կապը առաքելության և ռազմավարական նպատակների հետ հիմնականում բացակայում է: Պլաններում բացակայում են նաև կատարողականի ցուցիչները (KPI) և անհրաժեշտ ռեսուրսները: Բացակայում են նաև երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմները:

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար հատուկ մեխանիզմներ չկան, սակայն, հաշվի առնելով, որ պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը բեմարվեստի, կինոարվեստի, հեռուստատեսության ոլորտների աշխատակիցներ են և ապահովում են շրջանավարտ-գործատու-բուհ հետադարձ կապը, դրանով իսկ որոշ չափով լրացնում են այդ մեխանիզմների բացակայությունը: Վերը նշված հանգամանքը հնարավորություն է տալիս ուսուցման որակի մշտադիտարկման, վերլուծության ու գնահատման, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և բավարարման համար:

Որակի կառավարման շրջափուլը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) դեռևս ամբողջապես ներդրված չէ:

ԵԹԿՊԻ-ի գործունեության, տարբեր գործընթացների արդյունավետությունը, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմները թերի են:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ի կառավարման համակարգը պահպանելով ուսանողների ու դասախոսների մասնակցությամբ որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացը և կառավարման էթիկայի կանոնները, հիմնականում ապահովում է առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացումը, նաև այն, որ բուհը գիտակցում է պլանավորման, մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլն ավարտուն

դարձնելու անհրաժեշտությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է բավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

<u>3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:</u>

ԵԹԿՊԻ-ում իրականացվում են Դերասանական արվեստ, Ռեժիսուրա, Պարարվեստի ռեժիսուրա, Պարարվեստ, Կինոարվեստ, Թատերագիտություն, Կինոգիտություն, Գրական ստեղծագործություն, Օպերատորություն, Գեղանկարչություն, Սոցիալ մշակութային գործունեություն (արվեստի կառավարում), Համակարգչային գեղարվեստական նախագծում, Հագուստի մոդելավորում մասնագիտությունները, որոնք համապատասխանում են բուհի առաքելությանը:

2014 թվականի օգոստոսին հաստատվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» փաստաթուղթը, որում նկարագրվում է նոր ՄԿԾ-ներին ներկայացվող պահանջները՝ ներառյալ ուսումնառության արդյունքները, դրանց մշակման և հաստատման ընթացակարգը, ինչպես նաև կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը:

ՄԿԾ-ները մշակված են ըստ բուհի կողմից սահմանված ուսումնառության արդյունքներ պարունակող ձևաչափերի: Սակայն ՄԿԾ-ների և դասընթացների մակարդակում ձևակերպված ուսումնառության արդյունքներն վերաձևակերպման կարիք ունեն: Չափելի չէ ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱԾ-ին կամ դուբլինյան նկարագրիչներին: ՄԿԾ-ների և ՈԱԾ-ի համապատասխանությունն արտացոլող գործիքները և հիմքերը բացակայում են: Մշակվել է ՄԿԾ-ի վերջնարդյունքների և դասընթացների համեմատական մատրիցը: Սակայն պարզ չեն մատրիցի լրացման սկզբունքները, ի՞նչպես են հաշվի առնվում դասընթացների ուսումնառության արդյունքները:

Այնուամենայնիվ, ուսումնական պլաններում ներկայացված դասընթացները ապահովում են ՄԿԾ-ների բովանդակության հաջորդականությունը և փոխկապակցվածությունը:

Ինքնավերլուծությունից և այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԵԹԿՊԻ-ն իր ՄԿԾ-ները մշակելիս բենչմարքինգ է իրականացրել հիմնականում ՌԴ առաջատար բուհերի (ГИТИС, ВГИК) կրթական ծրագրերի հետ: ՌԴ-ում ընդունված մոտեցումների կիրառման օգտին են խոսում նաև ՄԿԾ-ների մասնագրերում բերված ՈՒԱ-ների բաժանումը

(գիտելիք և իմացություն, գործնական կարողություններ, ընդհանրական կարողություններ) և թվաքանակը (Եվրոպական բուհերում դրանք սովորաբար չեն գերազանցում 15-ը, իսկ Օպերատորություն ՄԿԾ-ում դրանք 24-ն են): Եվրոպական փորձն բավականաչափ ուսումնասիրված և հաշվի առնված չէ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ուսանողակենտրոն դառնալը կարևոր խնդիր է ԵԹԿՊԻ-ի համար, քանզի այն նշվում է բուհի առաքելությունում: Կիրառական մասնագիտական դասընթացների դասավանդումը և ուսումնառությունը հիմնված է կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման վրա, ինչը մեծապես նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, մինչդեռ ընդհանուր-հումանիտար և տեսական դասընթացներինը՝ հիմնականում ուսանողակենտրոն չէ:

Ինքնավերլուծությունում ներկայացված է «Թատերագիտություն» ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման ու ուսումնառության ձևերի համապատասխանության աղյուսակը: Սակայն աղյուսակում բերված դասավանդման և ուսումնառության մեթոդները շատ ընդհանրական են ներկայացված (ներկայացված են դասերի ձևերը): Առանձին դասընթացների մակարդակում ուսումնառության արդյունքները և դասավանդման ու ուսումանոության մեթոդները համապատասխանեցված չեն: Պարզ չէ դասընթացի մակարդակում ուսումնառության արդյունքների և դասավանդման ու ուսումնառության մեթոդների համաձայնեցվածության աստիճանը (հորիզոնական համաձայնեցում /horizontal alignment): Հորիզոնական համաձայնեցման աղյուսակները սովորաբար պատրաստվում են առանձին դասընթացների համար, այլ ոչ թե ամբողջ ՄԿԾ-ի մակարդակում:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Բուհը մշակել է ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման քաղաքականություն, որն արտացոլված է գործող «ԵԹԿՊԻ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ում և ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների և գնահատման մեթոդների համապատասխանության աղյուսակներում:

«ԵԹԿՊԻ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ում նկարագրվում է գնահատման մեթոդաբանությունը, գնահատման սանդղակը և նշագրումը, միջանկյալ և եզրափակիչ ստուգումների կազմակերպումը, առաջադիմության հաշվարկումը և գրանցումը, ընթացիկ միջանկյալ և ամփոփիչ քննություններ և ստուգարքների բողոքարկման ընթացակարգը: Սակայն գիտելիքների և հմտությունների գնահատումը գնահատման կարգում չի տարբերակվում:

«Թատերագիտություն» մասնագիտության ուսումնառության արդյունքների և գնահատման մեթոդների համապատասխանության աղյուսակում որպես գնահատման մեթոդներ ներկայացված են գնահատման ձևերը: Օրինակ՝

- ընթացիկ առաջադրանքների ստուգումներ,
- գրավոր և բանավոր ստուգումներ,
- ամփոփիչ ստուգումներ, այդ թվում՝ քննական տոմսերի կիրառմամբ:

Մշակված չեն բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման հստակ չափանիշները:

Ակադեմիական ազնվության ապահովման մասին կարգում անդրադարձ չկա:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՄԿԾ-ների բովանդակային բենչմարքինգ է իրականացվել արտերկրի (Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելորուսի, Էստոնիայի, Վրաստանի) նմանատիպ առաջատար բուհերի ՄԿԾ-երի հետ: Ակտիվ համագործակցություն է սկսվել Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի հետ:

Ուսանողների փոխանակման առումով ԵԹԿՊԻ-ն համագործակցում է 11 բուհերի հետ, որոնցից 3-ը եվրոպական պետությունների (Էստոնիա, Լատվիա, Լեհաստան), 4-ը ՌԴ-ի, 2-ը Վրաստանի, 2-ը Բելարուսի բուհեր են: Թեպետ վերջին 5 տարիների ընթացքում նշված բուհերից 6-ի հետ ուսանողների փոխանակում չի եղել: Մնացած բուհերի հետ փոխանակման նպատակով մեկնել և վերադարձել է 24 ուսանող, ընդ որում վերջին երկու տարում փոխանակվել է միայն 1 ուսանող, սակայն Եվրոպական բուհեր մեկնող ուսանող չի եղել: Այլ բուհերից նմանատիպ փոխանակման ծրագրով ԵԹԿՊԻ եկած ուսանողներ չեն եղել:

Դասախոսների փոխանակման սահմաններում ԵԹԿՊԻ-ն համագործակցում է 9 բուհերի հետ, որոնցից 1-ը եվրոպական է (Էստոնիա), 3-ը ՌԴ-ի, 2-ը Վրաստանի, 2-ը Բելարուսի, 1-ը Ուկրաինայի բուհեր են: Եվրոպական բուհերի հետ համագործակցությունը աննշան է:

Վերջին 5 տարիների ընթացքում նշված բուհերից 5-ի հետ չի փոխանակվել ոչ մի դասախոս: Մնացած բուհերի հետ փոխանակման նպատակով ԵԹԿՊԻ է եկել 11 դասախոս, ընդ որում վերջին երկու տարում փոխանակում չի եղել: ԵԹԿՊԻ-ից նմանատիպ փոխանակման ծրագրով այլ բուհ մեկնած դասախոս չի եղել:

Վերընշված ուսանողների և դասախոսների շարժունությունն իրականացվել է գիտաժողովների, ամառային դպրոցների, վարպետության դասընթացների, փառատոների մասնակցության ձևաչափով:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵԹԿՊԻ-ի կողմից մշակվել է «ՄԿԾ-ների մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» - փաստաթուղթը: Սակայն, քանի որ փաստաթուղթը նոր է մշակվել, ուստի մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման գործընթացները դեռևս առջևում են:

Ինչպես վերը նշվեց՝ բեմարվեստի, կինոարվեստի, հեռուստատեսության ոլորտների աշխատակիցների դասավանդումը ինստիտուտում ապահովում է շրջանավարտ-գործատու-պրոֆեսորադասախոսական կազմ հետադարձ կապը և դիտվում որպես

ՄԿԾ-երի որակի գնահատման մեխանիզմ: Սակայն ՄԿԾ-ների ռիսկերի գնահատման մեխանիզմները և գործիքները բավարար չեն: Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը մասնատված է: Հիմնականում հարցումներ են կատարվում մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների շրջանում:

Որպես ՄԿԾ-ների նախնական մշտադիտարկման և գնահատման գործիքներ են դիտվում նաև կիրառվող ուսանողական հարցումները, որոնց միջոցով գնահատվել են դասախոսների դասավանդման մեթոդները: ՄԿԾ-ների որակի վերաբերյալ հետադարձ կապի, ռիսկերի գնահատման մեխանիզմները և գործիքները բավարար չեն:

Դատողություններ:

ԵԹԿՊԻ-ի առաքելության և մասնագիտությունների կրթական ծրագրերի համեմատությունից երևում է, որ ԵԹԿՊԻ-ի կողմից իրականացվող մասնագիտությունները հիմնականում համապատասխանում են առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին:

Մշակվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» փաստաթուղթը, սակայն այն դեռ ներդրման փուլում է: ՄԿԾ-ները ֆորմալ մշակված են ըստ ուսումնառության արդյունքների: Բուհը որդեգրել է ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն:

ՄԿԾ-ները ուղղահայաց և հորիզոնական համաձայնեցման (alignment) կարիք ունեն: Հորիզոնական համաձայնեցումը կապահովի յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի համար սահմանված ուսումնառության արդյունքների ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների ընտրության ընթացակարգերի և գործիքների մշակումը և ներդնումը: Ուղղահայաց համաձայնեցումը կնպաստի ՈԱՇ-ի և ՄԿԾ-ի, ինչպես նաև ՄԿԾ-ի և դասընթացների/մոդուլների մակարդակներում սահմանված ուսումնառության արդյունքների համապատասխանությունն արտացոլող սկզբունքների, ընթացակարգերի և գործիքների մշակմանն ու ներդրմանը:

Բուհը դեռևս չունի ակադեմիական ազնվությունն ապահովող ընթացակարգեր և մեխանիզմներ:

Փորձագիտական խմբի կարծիքով ուսանողակենտրոն մոտեցումը՝ կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման վրա հիմնված (problem based learning) ուսուցումը իրականացվում է հիմնականում կիրառական մասնագիտական դասընթացների դեպքում:

ՄԿԾ-ները մշակելիս բենչմարքինգ է իրականացվել ՌԴ բուհերի կրթական ծրագրերի հետ ինչը զգալի սահմանափակում է ուսանողների և դասախոսների շարժունության հնարավորությունը: Եվրոպական բուհերի հետ համագործակցության մակարդակը ցածր է:

«ՄԿԾ-ների մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» փաստաթղթի առկայությունը վկայում է ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն որդեգրելու մասին: Սակայն, փաստաթուղթը նոր է մշակվել, և համապատասխան գործընթացները դեռևս առջևում են:

Փորձագիտական խմբի կարծիքով արդյունահեն ՄԿԾ-ների, առարկայական ծրագրերի, դրանց մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման կարգերի առկայությունը, ինչպես նաև ուսանողների ըստ ՈՒԱ-ների գնահատումը կարող է նպաստել ՄԿԾ-ների միջազգայնացմանը և շարժունությանը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են առաքելությանը, հանդիսանում են բուհի գործունեության պլանավորման անբաժան մասը, հիմնականում մշակված են ըստ ուսումնառության վերջնարդյունքների, առկա է ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

<u>4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:</u>

Ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով բուհում իրականացվում են.

- Ինստիտուտի և մասնաճյուղերի ընդունելության գովազդարշավներ՝ ինստիտուտի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ուսանողական կառույցների, հիմնական գործընկեր գործատուների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավմամբ,
- ինստիտուտի կողմից առաջարկվող ծրագրերի և մասնագիտությունների վերաբերյալ գովազդող բուկլետների տարածում և ցուցահանդեսների, հեռուստա և ռադիո հաղորդումների ու ցուցադրումների կազմակերպում,
- ինստիտուտի համապատասխան հանձնախմբերի այցելություններ ՀՀ մարզերի և Երևանի ավագ դպրոցներ,
- ապագա դիմորդների ճանաչողական այցերի և բաց դռների օրերի, անվճար խորհրդատվական և նախապատրաստական ծառայությունների կազմակերպում:

Բուհն ունի նախապատրաստական բաժին, ուր վերջին հինգ տարիների ընթացքում ուսումնառել է 371 դիմորդ:

Բակալավրի կրթական ծրագրով ուսանողների ընդունելությունը իրականացվում է «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ»-ի համաձայն: Դիմորդների գնահատումը իրականացվում է բուհի կողմից ձևավորվող ներքին առարկայական հանձնաժողովների կողմից ըստ ներքին չափանիշների (բուհի կողմից առաջարկված հանձնաժողովների նախագահները և բուհի կողմից մշակված ընդունելության չափանիշները հաստատվում են ՀՀ ԿԳ նախարարի կողմից): ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի ընդունելությունը իրականացվում է ներքին՝ «ԵԹԿՊԻ 2015թ. մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ (Հավելված 24)»-ի համաձայն: Սակայն բուհի կամ դրա մասնագիտությունների առանձնահատկություններից բխող լրացուցիչ պահանջներ և/կամ չափանիշներ այն չի պարունակում:

<u>4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:</u>

Ուսանողների կրթական կարիքների վերհանման բաղադրիչներից է ԵԹԿՊԻ-ում կիրառվող կուրսերի ղեկավարների առկայությունը: Կուրսերի ղեկավարները վարում են մասնագիտական պարապմունքները և համակարգում են կուրսի ուսումնական գործունեությունը: Արդյունքում ուսանողները միշտ հնարավորություն ունեն դասախոսի հետ անհատական շփման միջոցով բարձրաձայնել իրենց հետաքրքրող խնդիրները և ստանալ օժանդակություն և խորհրդատվություն: Կուրսերի ղեկավարների կոմպետենցիաներից դուրս գտնվող խնդիրները քննարկվում են մասնագիտական ամբիոններում, արվում եզրակացություններ և առաջարկներ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման հիմնական բաղադրիչներից է ուսանողների շրջանում դասավանդման որակի և ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ անցկացվող անկետային հարցումները («Ուսանողի գնահատականը բուհին», «Ուսանողի գնահատականը դասախոսին ըստ դասավանդվող առարկայի»): Հարցումները վերլուծվում են, իսկ դուրսբերված խնդիրները քննարկվում: Դրական է նաև բուհում իրականացվող ուսանողության և դեկանների, պրոռեկտորների, ռեկտորի հետ պարբերական հանդիպումների պրակտիկան:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ են համարվում նաև կառավարման տարբեր խորհուրդներում ուսանողների ընդգրկումը, քանի որ այդ օղակներում են ներկայացվում ու քննարկվում ուսանողների արձագանքները բուհի կողմից մատուցվող կրթական ծառայությունների, ինչպես նաև բուհի գործունեության տարբեր ոլորտներին առնչվող հարցերի շուրջ:

<u>4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:</u>

Մասնագիտական կուրսերի ստեղծագործական ղեկավարների կողմից անհատական պարապմունքներ են անցկացվում և անընդհատ խորհրդատվական ծառայություն են իրականացնում:

Բուհում պարբերաբար կազմակերպվում են ՀՀ և օտարերկրյա մասնագետների վարպետության դասեր, որոնց կարող են ներկա գտնվել բոլոր հետաքրքրված ուսանողներն ու դասախոսները:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Բուհում գործում է փաստաթղթերի, այդ թվում ուսանողների դիմումների, ընդունման և համապատասխան փաստաթղթաշրջանառության ընթացակարգ (ավանդույթ դարցած փաստաթղթաշրջանարության համակարգ): Չնայած, որ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգը և ժամանակացույցը բացակայում են, ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել դեկաններին, ամբիոնների վարիչներին, ինչպես նաև ռեկտորին և պրոռեկտորներին ու այլ վարչական աշխատակիցների:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Բուհում գործում է Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը, մշակվել է դրա կանոնադրությունը, հաստատվել ԵԹԿՊԻ կարիերայի և պրակտիկայի 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը: Սակայն կարիերայի կենտրոնի ռազմավարական նպատակները հստակեցված չեն:

ԵԹԿՊԻ Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են խորհրդատվական հանդիպումներ կամ անցկացվում անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը: Շրջանավարտների զբաղվածությունը բավականին բարձր է:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում համակարգված չէ: Ինստիտուտը դեռևս չունի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավելու հստակ մեխանիզմներ: Սակայն կան ամբիոններ, որոնք ուսանողներին աջակցում են ներգրավվելու հետազոտական աշխատանքներում: Գործող միակ մեխանիզմը ինստիտուտի «Հանդես» գիտամեթոդական ժողովածուն է, որում պարբերաբար իրենց հոդվածներն են ներկայացնում ինչպես մագիստրատուրայի, այնպես էլ բակալավրի ուսանողները: Ուսանողները մասնակցում են տարբեր գիտաժողովների ՀՀ-ում և արտերկրներում:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողների իրավունքները սահմանվում են ԵԹԿՊԻ ուսանողների ներքին կարգապահական կանոններով և ԵԹԿՊԻ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ:

Ինստիտուտի ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները բուհի ուսումնառողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը, ապահովում է ուսանողների մասնակցությունը բուհի

կառավարմանը, բուհի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր, իրազեկում է ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, նպաստում է ուսանողների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, խթանում է ուսանողների կրթական, հոգևոր, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը, աջակցում է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպում է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը:

Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով նախատեսվում է բուհում ստեղծել նաև ուսանողների իրավունքների պաշտպանության և օրինականության պահպանման հանձնաժողով համապատասխան կանոնակարգի հաստատմամբ), որի հիմնական նպատակները կլինեն ուսանողների դիմում-բողոքներին համապատասխան ընթացք և խնդիրներին օպերատիվ լուծում տալը, ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով Ուսանողական խորհրդի հետ տեղեկատվության փոխանակումը և այլն:

<u>4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:</u>

Բուհում իրականացվում են «Ուսանողի գնահատականը բուհին», «Ուսանողի գնահատականը դասախոսին ըստ դասավանդվող առարկայի», «Շրջանավարտի գնահատականը բուհին» հարցումներ: Սակայն այդ հարցումները չեն ծածկում ուսանողներին առնչվող բոլոր խնդիրները:

Դատողություններ:

Բուհն ունի ուսանողների հավաքագրման մշակված մեխանիզմներ: Ինստիտուտում գործող նախապատրաստական բաժինը համագործակցում է հանրակրթական և ավագ դպրոցների, արվեստի քոլեջների հետ:

ԵԹԿՊԻ-ի ուսանողների ընդունելությունն իրականացվում է «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի)» կարգի համաձայն և մասնագիտական առարկաների ներբուհական քննությունների միջոցով, ընդունելության ծրագրերը և գնահատման չափանիշները հաստատվում են Գիտխորհրդի կողմից:

ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ներքին՝ «ԵԹԿՊԻ 2015թ. մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի համաձայն»: Սակայն բուհի կամ դրա մասնագիտությունների առանձնահատկություններից բխող լրացուցիչ պահանջներ և/կամ չափանիշներ այն չի պարունակում:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵԹԿՊԻ-ում կրթությունը հիմնականում իրականացվում է արվեստանոցների և անհատական պարապմունքների միջոցով, որտեղ ուսանողները միշտ հնարավորություն ունեն արվեստանոցների և դասախոսների հետ անձնային շփման միջոցով բարձրաձայնել իրենց հետաքրքրող խնդիրները և ստանալ պատասխաններ: Յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը, խնդիրներն ու բացթողումները պարբերաբար քննարկվում են մասնագիտական ամբիոններում, արվում եզրակացություններ և առաջարկներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության նպատակով անցկացվում են նաև հարցումներ,

արդյունքները վերլուծվում են, իսկ դուրսբերված խնդիրները քննարկվում: Ուսանողների կողմից կուրսերի ղեկավարներին ներկայացվող խնդիրները քննարկվում են ամբիոնների նիստերում և հնարավորության դեպքում լուծվում: Բուհում պարբերաբար իրականացվում են հանդիպումներ ուսանողության և դեկանների, պրոռեկտորների, ռեկտորի հետ:

Ուսանողները ներգրավված են և հնարավորություն ունեն խնդիրներ բարձրացնել բուհի կառավարման խորհուրդներում:

Չնայած, որ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգը և ժամանակացույցը բացակայում են, ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել ուսումնական և վարչական աշխատակիցներին:

ԵԹԿՊԻ-ի Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է խորհրդատվական հանդիպումներ կամ անցկացնում է անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը: Սակայն կարիերայի և պրակտիկայի կենտրոնի ռազմավարական նպատակները հստակեցման կարիք ունեն: Նախատեսված գործողությունների վերջնարդյունքները հաճախ չափելի չեն: Բացակայում է նաև գործողությունների իրականացման ժամանակացույցը:

Ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում չի համակարգվում: Սակայն որոշ ամբիոններ ուսանողներին աջակցում են հետազոտական աշխատանքներ կատարելու հարցում:

Ուսանողների իրավունքները սահմանվում են ԵԹԿՊԻ ուսանողների ներքին կարգապահական կանոններով և ԵԹԿՊԻ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: Ուսանողական ինքնակառավարման գործընթացները և ուսանողների իրավունքների պաշտպանությունն ապահովում է ինստիտուտի ուսանողական խորհուրդը:

Ուսանողների շրջանում անցկացվող հարցումները ամբողջությամբ չեն գնահատում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունները, որակի ապահովման մեխանիզմները լրամշակման կարիք ունեն: Այս գործառույթների իրականացումը դժվարանում է Որակի ապահովման կենտրոնի գործունեության ոչ ճիշտ պլանավորման պատճառով:

Եզրահանգում:

Բուհն ուսանողներին հնարավորինս տրամադրում է աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով, սակայն արդյունավետության գնահատման մեխանիզմները դեռևս մշակմված չեն: Չնայած առկա թերություններին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը համապատասխանում է չափանիշի պահանջներին, քանի որ պահպանված են ուսանողների իրավունքների պաշտպանվածության, որոշումների կայացման գործընթացներում ներգրավվածության, ուսանողների ուղղորդման և օժանդակության հիմնական սկզբունքները:

Եզրակացություն:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Կրթական ծրագրերը իրականացնելու համար բուհն ունի բարձր մասնագիտական որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ: ՊԴ կազմի զգալի մասը հանրապետության կինոյի, թատերական արվեստի ոլորտի հանրապետությունում ճանաչված պրակտիկ մասնագետներ են:

209 պրոֆեսորադասախոսական անձնակազմից 6-ը գիտությունների դոկտորներ են, 19-ը՝ թեկնածուներ, 35-ը՝ պրոֆեսորներ, 33-ը՝ դոցենտներ: Դասավանդողներից 10-ը արժանացել են ՀԽՍՀ և ՀՀ ժողովրդական արտիստի և 29-ը՝ ՀԽՍՀ և ՀՀ վաստակավոր արտիստի կամ Արվեստի վաստակավոր գործչի կամ Մշակույթի վաստակավոր գործչի կոչման, 4-ը՝ ՀՀ վաստակավոր մանկավարժի, 2-ը՝ ՀՀ վաստակավոր նկարչի, 2-ը՝ ՀՀ վաստակավոր լրագրողի, 1-ը՝ Գիտության վաստակավոր գործիչ և 3–ը՝ Երևանի պատվավոր քաղաքացու կոչման (առ 01.01.2016թ):

Աշխատակիցներից 43-ը ստացել են ՀՀ պետական պարգևներ և մեդալներ, ՀՀ վարչապետի պատվոգրեր, ՀՀ Կրթության, Մշակույթի նախարարությունների հուշամեդալներ և պատվոգրեր: Դասախոսներից 7-ը միջազգային մրցույթների դափնեկիր են:

ԵԹԿՊԻ-ում գործում է ՊԴ կազմի ձևավորման կարգ և այն իրականացնելու հստակ գործընթացներ: Սահմանված են ԵԹԿՊԻ-ի գիտամանկավարժական պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման չափանիշները և ձևավորման ընթացակարգը: Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը կատարվում է մրցութային կարգով, պայմանագրային հիմունքներով:

Ինստիտուտի աշխատակիցների 28% կենսաթոշակային տարիքի է: Սկսած 2005 թ.-ից նրանց հետ կնքվում են մինչև 1 տարի ժամկետով պայմանագրեր: Դա չի վերաբերում վարչական, օժանդակ և սպասարկող անձնակազմին, որոնց հետ կնքվում են անորոշ ժամկետով պայմանագրեր, համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսդրության:

ԵԹԿՊԻ-ի դասախոսների 80%-ը ինստիտուտի շրջանավարտներ են: Գիտամանկավարժական կադրերի որակավորումները համապատասխանում են անհրաժեշտ պահանջներին:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Չնայած, որ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները սահմանված չեն՝ մրցույթների ընթացքում դրանք քննարկվում և հաշվի են առնվում: Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը և դրան համապատասխան դասախոսների հավաքագրման ընթացակարգը ապահովում են անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴ կազմ:

Մշակվել է և նախատեսվում է ներդնել ԵԹԿՊԻ-ի դասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման ծրագիրը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասախոսական կազմի պարբերական գնահատման նպատակով ԵԹԿՊԻ-ում իրականացվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները: Իրականացվող հարցումները վերաբերում են դասախոսի մասնագիտական կարողությունների ու պատրաստվածության աստիճանի, դասախոսի հատուկ որակների, ինչպես նաև դասավանդվող դասընթացի մեթոդական ապահովման հարցերին: Դասալսումներն իրականացվում են ամբիոնների վարիչների և պրոֆեսորների կողմից: Սակայն դասալսումների իրականացման, արդյունքների վերլուծության և դրանց կիրառման համար դեռևս մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր: Դասախոսական կազմի պարբերական գնահատման համար նախատեսվում է ներդնել նաև «անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների կողմից պարբերաբար գնահատման» և «ինքնագնահատման գործընթացի ներմուծման» մեխանիզմներ:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԵԹԿՊԻ-ում իրականացվող դասախոսական կազմի ներքին գնահատման նպատակն է խթանել դասախոսների որակավորման շարունակական աճը, դասավանդման հմտությունների ու մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործումը, հետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային և խորհրդատվական աշխատանքները ուսանողների հետ, ուսումնամեթոդական աշխատանքները, դասախոսների ակտիվ մասնակցությունը ինստիտուտի և նրա ստորաբաժանումների գործունեությանը: Սակայն դասախոսների գնահատման արդյունքում խրախուսման կամ պատժի մեխանիզմներ և գործիքներ չկան: Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվում:

Ասպիրանտուրայի և հայցորդական համակարգերի առկայությունը, վարպետության դասերի արտասահմանյան խաղարկային բուհերի առաջատար մասնագետների մասնակցությամբ, գիտական և մեթոդական քննարկումների, սեմինարների,

գիտաժողովների, փառատոների, ստեղծագործական մրցույթների կազմակերպումը և անցկացումը նպաստում է ՊԴ կազմի որակավորումների բարձրացմանը:

Մշակվել է և նախատեսվում է ներդնել ԵԹԿՊԻ-ի դասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման ծրագիրը:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը հիմնականում երաշխավորվում է այն հանգամանքով, որ դասավանդողների 80%-ը ԵԹԿՊԻ-ի հիմնական հաստիքային աշխատակիցներ են: Դասավանդման բարձր որակն ապահովելու նպատակով, համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով հրավիրվում են գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, կրթության և մշակույթի տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը մշակվել և ներդրման փուլում են: Դրա վերաբերյալ քայլերի ձեռնարկման մասին է վկայում ԵԹԿՊԻ դասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման ծրագրի ու «Դասախոսի որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման հնգամյա անհատական ծրագիր»-ի առկայությունը, որոնք նախատեսվում է գործարկել մոտակա ժամանակներում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Բուհն ունի ուսումնական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ թվաքանակի և որակավորման ուսումնաօժանդակ անձնակազմ: Վարչական անձնակազմը բավարար է ռազմավարական նպատակներն իրականացնելու համար:

Դատողություններ:

Բուհում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը և դրան համապատասխան դասախոսների հավաքագրման ընթացակարգն ապահովում են համապատասխան մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ:

ԵԹԿՊԻ-ում գործում են դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնցից կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները: Նախատեսվում է ներդնել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու մի շարք լրացուցիչ գործիքներ:

Պարբերաբար իրականացվող ներքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ բուհի կողմից չեն իրականացվում: Սակայն մշակվել է և նախատեսվում է ներդնել ԵԹԿՊԻ-ի դասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական կատարելագործման ծրագիր:

ՄՈՒՀ-ը հիմնականում երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Բուհն ունի ուսումնական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ թվաքանակի և որակավորման ուսումնաօժանդակ անձնակազմ: Վարչական անձնակազմը բավարար է ռազմավարական նպատակներն իրականացնելու համար, սակայն աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ են վերապատրաստումներ:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ բուհն իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար հիմնականում ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնմաօժանդակ կազմով, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

«Հետազոտություններ և նորարարություններ»-ը բուհի 2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է, որը ներառում է մեկ ծավալուն խնդիր՝ «Հետազոտությունների ծավալի էական աճ՝ դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար» և 11 գործողություններ և գործընթացներ: Բուհի հետազոտական հավակնությունները և հետաքրքրությունները այլ փաստաթղթերում արտացոլված չեն:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտական գործունեության միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր մշակված չեն: Բուհում իրականացվող հետազոտությունները չեն համակարգվում, բխում են դասախոսների անձնական հետաքրքրություններից: Ինստիտուտում իրկանացվող

հետազոտությունները թեև չեն պլանավորվում, սակայն կատարվում են ամբիոններում և համապատասխանում են դրանց մասնագիտական ուղղվածությանը:

Ինստիտուտը որոշակի ծախսեր է կատարում գիտաժողովների, կոնֆերանսների, վարպետության դասերի անցկացման, գործուղումների, կրթական բարեփոխումների համար՝ տեխնիկայի, սարքավորումների ձեռքբերում և այլն

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հետազոտությունների իրականացումը և զարգացումն ապահովող հստակ քաղաքականություն և ընթացակարգեր չկան: Յուրաքանչյուր ամբիոն իրականացնում իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքներն ամփոփվում են ամենամյա հաշվետվություններում:

Բուհի գիտական խմբագրական խորհուրդը վերահսկում է բուհի «Հանդես» գիտամեթոդական ամսագրում հրապարակվող հետազոտությունների որակը: 2015 թ.-ից բյուջեում առանձին հոդված է մտցվել հրատարակչական ծախսերի համար:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Վերջին 5 տարիների ընթացքում բուհի դասախոսների կողմից միջազգային գրախոսվող ամսագրերում «Հայկազյան հայագիտական հանդես (Բեյրութ)» տպագրվել է ընդամենը 4 հոդված: Դա շատ ցածր արդյունք է: Ընդ որում, նշված ամսագիրը միջազգային գրախոսվողի կարգավիճակ չունի: Հետազոտական գործունեության միջազգայնացումը բուհում չի կարևորվում:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման կանոնակարգված մեխանիզմները բացակայում են: Թեպետ բուհը այդպիսի մեխանիզմ է դիտում ասպիրանտների և հայցորդների բուհում հետազոտություն կատարելը և միաժամանակ դասավանդելը: Բուհի կողմից այդպիսի մեխանիզմ է դիտվում նաև Ուսումնական թատրոնի կողմից այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք նպաստում են ուսանողների-երիտասարդ ստեղծագործողների համագործակցությանը:

Դատողություններ:

Հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները հստակ սահմանված չէն: Բուհում իրականացվող հետազոտությունները չեն համակարգվում, բխում են դասախոսների անձնական հետաքրքրություններից: Չկան հետազոտությունների իրականացումը և զարգացումն ապահովող հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Չի կարևորվում հետազոտական գործունեության միջազգայնացումը: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները բացակայում են:

Եզրակացություն:

Հաշվի առնելով, որ ԵԹԿՊԻ-ն չի ապահովում հետազոտական գործունեության կանոնակարգված իրականացումը և հետազոտության կապն ուսումնառության հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չափանիշ 6-ի պահանջները չի բավարարում:

Եզրահանգում:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Ինստիտուտը և նրա մասնաճյուղերը ապահովված են լսարանային, գործնական և հետազոտական գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկայով հագեցված գրադարանով, ֆիլմադարանով, լսարաններով, դահլիճներով, արվեստանոցներով և լաբորատորիաներով:

ԵԹԿՊԻ-ի գրադարանում կենտրոնացված է բավարար քանակով ընդհանուր և մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով): ԵԹԿՊԻ-ի և մասնաճյուղերի գրադարանային ֆոնդը կազմում է 43.434 միավոր (դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, հանդեսներ և այլ գրականություն): Ընդհանուր և մասնագիտական գրականության թարմացումը կատարվում է ըստ ԵԹԿՊԻ-ի ուսումնամեթոդական աշխատանքների պահանջների, ինչպես նաև նվիրատվությունների շնորհիվ: Գրադարանում տեղակայված են համակարգիչներ, կուտակիչներ, ցանցային սարքեր և այլն:

ԵԹԿՊԻ-ի ֆիլմադարանն ունի երկու կինոդահլիճ՝ համապատասխան տեխնիկայով (հեռուստացույց, DVD նվագարկիչ, էկրան, պրոյեկցիոն տեխնիկա, համակարգիչ): Ֆիլմերի և ներկայացումների, տեսագրությունների համալրումը ֆիլմադարանում կատարվում է՝ հաշվի առնելով ինստիտուտի մասնագիտական և ընդհանուր մասնագիտական դասընթացները: Ֆիլմադարանում առկա են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզվով ֆիլմեր ու ներկայացումների, վարպետաց դասերի տեսագրություններ, աուդիոգրքեր (հայ գրականության դասական հեղինակները՝ Սուրեն Քոչարյանի, Սոս Սարգսյանի ընթերցմամբ), ռադիոբեմականացումներ: Այսօր Ֆիլմադարանն ուներ 4000-ից ավելի սկավառակներ: Ֆիլմադարանն օրեցօր համալրվում է և՛ ժամանակակից, և՛ դասական ֆիլմերով: Կինոդահլիճներից, ֆիլմադարանի DVD և CD սկավառակներից օգտվում են ինչպես առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողները, այնպես էլ նախապատրաստական բաժնի դիմորդները: Կինոդահլիճներում տեղի են ունենում ուսումնական ծրագրերով նախատեսված դիտումներ: Ցուցադրվում են նաև ուսանողական աշխատանքներ՝ կուրսային և դիպլոմային նյութեր: Վարպետության դասերը, հանդիպումները, փառատոնային ֆիլմերի ցուցադրումներն ու քննարկումները նույնպես տեղի են ունենում կինոսրահներում:

2014 թվականի սեպտեմբերի 5-ին մեկնարկվեց Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնը (ՍՏՈՒԿ Փրոդաքշն) ծրագիրը, որի նպատակն է. նպաստել Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ինստիտուցիոնալ բարեփոխումներին: Ծրագիրը իրականացվում է Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրերդ ծրագրի շրջանակներում: Ծրագրի

շրջանակներում ստեղծվել, կահավորվել, գույքավորվել են կինոֆակուլտետի լաբորատորիաները, ինչպես նաև ինստիտուտը համալրվել է ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով:

Ինստիտուտի տարածքում նաև տեղակայված են՝ Ուսանողական թատրոն-լաբորատորիան, պարային սրահները, մեներգի կաբինետները, տեսամոնտաժային և ձայնամոնտաժային, մուլտ տաղավարները, մասնագիտական լսարաններ, ընթերցասրահը, կոնֆերենց սրահը, բուժկետը, սննդի սպասարկման կետը, արհեստանոցները:

Բուհը հիմնականում ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Բուհում գործում է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմ: Յուրաքանչյուր տարվա վերջում կազմվում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը հաստատվում է ԵԹԿՊԻ-ի Խորհրդի կողմից: Տարեկան նախահաշվի պլանավորումը կատարվում է ըստ Ինստիտուտի գործունեության բնագավառներում՝ հիմնվելով ուսանողական համակազմի, կադրային և նյութական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի վրա:

Սահմանվում են տարեկան կողմնորոշիչ համամասնություններ Ինստիտուտի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու կառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև: Բյուջետային ցուցանիշների համակարգի մշակման գործընթացը կատարվում է ըստ գործունեության բնագավառների և զարգացման ուղղությունների:

Սակայն մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը բացակայում է: Իսկ ֆինանսների բաշխումը ըստ կրթական ծրագրերի կարիքների հիմնականում կատարվում է դասախոսական կազմի աշխատավարձերի և հիմնական ընթացիկ կազմակերպչական ծախսերի մասով:

Տարեկան բյուջեում բուհի գործունեության և մասնավորապես ուսումնական գործընթացի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների պահպանման և զարգացման համար նախատեսվող տոկոսները չնչին են: Այդպես 2015թ. բյուջեով կատարված ծախսերը արտահայտված %-ով ունի հետևյալ տեսքը.

- գրադարանային ֆոնդի պահպանման և հարստացման ծախսեր՝ 0.105%,
- բեմադրական ծախսեր՝ 0.118%,
- գույքի ձեռքբերման ծախսեր՝ 0.269%,
- սարքեր, սարքավորումների ձեռք բերում՝ 0.165%,
- գրասենյակային ծախսեր՝ 0.172%:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը լիարժեք չէ: Ֆինանսների բաշխումը ըստ կրթական ծրագրերի կարիքների հիմնականում կատարվում է դասախոսական կազմի աշխատավարձերի և հիմնական ընթացիկ կազմակերպչական ծախսերի մասով: Բացակայում է ՄԿԾ-ների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսների բաշխման պրակտիկան, չհաշված ԾԻԳ-ի դրամաշնորհի միջոցների հաշվին կատարված զարգացմանը ուղված ծախսերը: Սակայն կարևոր է նշել, որ ԾԻԳ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված սարքավորումները զգալի ներդրում են ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովելու համար:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Բուհում առկա է ՄԿԾ-ներն իրականացնելու համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր, արհեստանոցային բազա, ներառյալ՝ պարային սրահներ, մեներգի կաբինետներ, տեսամոնտաժային և ձայնամոնտաժային, մուլտ տաղավարներ, գրադարան, ընթերցասրահ, կոնֆերենց սրահ:

Ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար: Սակայն առկա ռեսդուրսների բաշխումը ըստ ռազմավարական նպատակների չի կատարվում: Ուստի որակի շարունակական բարելավումը և կայունությունը երաշխավորված չեն:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականությունը փաստաթղթային ձևով սահմանված չէ: Տեղեկատվության կառավարման հստակ գործընթացը և գործիքակազմը (տեղեկատվության կառավարման համակարգ) բացակայում են: Փաստաթղթավորվում են միայն ԽՍՀՄ տարիներից ավանդաբար կարևոր համարվող գործընթացները:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԵԹԿՊԻ-ում առողջության պահպանմանն ուղղված ծառայությունները մատուցվում են բուժկետի միջոցով: Բուժկետը ապահովված է առաջին բուժօգնության դեղորայքով և բժշկական գործիքներով, սակայն վերազինման կարիք ունի: Բուհում անվտանգությունը ապահովվում է պահակակետի և բուհի պահակների միջոցով: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքները հաշվի առնող միջավայրը բացակայում է:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շրջանում պարբերաբար հարցումներ են իրականացվում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության վերաբերյալ: Սակայն հարցումների արդյունքների հիման վրա դեռևս քայլեր չեն ձեռնարկվում:

Դատողություններ:

Բուհը հիմնականում ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր: Փորձագիտական խումբը այցի ընթացքում համոզվեց, որ բուհը ապահովված է լսարանային, գործնական և հետազոտական գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկայով, ունի հագեցված գրադարան, ֆիլմադարան, արվեստանոցներ և լաբորատորիաներ: ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների ապահովման համար վերջին տարիներին դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ գործնական պարապմունքների համար ստեղծվել են մասնագիտացված լաբորոտորիաներ, անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով հագեցված տաղավարներ:

Բուհում գործում է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմ: Յուրաքանչյուր տարվա վերջում կազմվում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը հաստատվում է ԵԹԿՊԻ-ի Խորհրդի կողմից: Տարեկան նախահաշվի պլանավորումը կատարվում է ըստ Ինստիտուտի գործունեության հիմնական բնագավառների:

Ֆինանսների բաշխումը ըստ կրթական ծրագրերի կարիքների հիմնականում կատարվում է դասախոսական կազմի աշխատավարձերի և հիմնական ընթացիկ կազմակերպչական ծախսերի մասով, ուստի մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը լրամշակման կարիք ունի:

Ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար:

Տեղեկատվության կառավարման հստակ գործընթացը և գործիքակազմը (տեղեկատվության կառավարման համակարգ) ձևավորման փուլում են:

Առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով ԵԹԿՊԻ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր, սակայն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կարիքները հաշվի առնող միջավայրը բացակայում է:

Բուհում ներդրվում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված առաքելության ու նպատակների, ինչպես նաև ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար բուհը ստեղծել է ապահով և անվտանգ ուսումնական միջավայր, բուհում գործում է ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմ, ներդրվում են ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների գնահատման մեխանիզմներ, հետևաբար բուհը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրահանգում:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հասարակության առջև ԵԹԿՊԻ-ի հաշվետվողականությունն ապահովվում է ֆակուլտետների և ամբիոնների տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ձևավորվող մեկ ընդհանուր տարեկան հաշվետվության միջոցով: ԵԹԿՊԻ-ում գործում է հաշվետվությունների ներկայացման երկու տեսակ՝ ուսումնագիտական գործունեության հաշվետվություն և ստեղծագործական աշխատանքների հաշվետվություն: Հաշվետվությունները ներկայացվում են Գիտական խորհրդի նիստում տարին մեկ անգամ: Գիտական խորհրդի քննարկումներից հետո ներկայացվում է ԵԹԿՊԻ-ի Խորհրդի նիստում, ռեկտորի ամենամյա հաշվետվության տեսքով: Այս համակարգը ճիշտ գործելու դեպքում կարող է հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմ հանդիսանալ, սակայն փաստաթղթային ձևով այն ձևակերպված չէ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԵԹԿՊԻ-ի կողմից ծավալվող բազմաբնույթ՝ կրթական, ստեղծագործական, հետազոտական, գործունեությունը շարունակաբար լուսաբանվում է մամուլում, հեռուստատեսությամբ և ԵԹԿՊԻ-ի կայքում: ԵԹԿՊԻ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կանոնակարգային և ընթացակարգային փաստաթղթերը մշակվել են «Կրթության Որակ և Համապատասխանություն» երկրորդ ծրագրի դրամաշնորհի շրջանակներում:

Նկատի ունենալով սոցցանցերի հաճախելիության մակարդակը հատկապես երիտասարդ սերնդի, ուսանողության շրջանում, գնահատելով ԵԹԿՊԻ-ի վարկանիշի ձևավորման և զարգացման գործում դրանց կարևոր ազդեցությունը և սոցցանցերի միջոցով անհրաժեշտ ինֆորմացիայի արագ որոնման հնարավորությունը՝ ստեղծվել են ԵԹԿՊԻ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջերը, որոնք կարճ ժամանակամիջոցում ձեռք են բերել հարյուրավոր օգտատերեր, որոնց տրամադրվում են օպերատիվ տեղեկատվություն ԵԹԿՊԻ-ի միջոցառումների մասին:

Նշված մեխանիզմներն ապահովում են ընթացակարգերի, բուհում իրականացվող գործընթացների թափանցիկությունը և դրանց հասանելիությունը հասարակությանը:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների այցելությունները Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներ, հասարակությանը տալիս են քննարկումների և կարծիքների արտահայտման հնարավորություն:

ՀՀ մշակութային բոլոր միջոցառումների վերաբերյալ ԶԼՄ-ների և ՀՀ հեռուստակենտրոնների ողջ անդրադարձը հանդես է գալիս իբրև հետադարձ կապ, քանի որ իրականացվում է ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների և ուսանողների միջոցով:

Նկարագրված գործընթացները կարող են դիտարկվել որպես հետադարձ կապի մեխանիզմներ, սակայն դրանք կանոնակարգված չեն և հստակ չէ, թե ստացված տեղեկատվությունն ինչպես է օգտագործվում: Բուհի էլեկտրոնային կայքը և սոցիալական ցանցերը որպես հաղորդակցության մեխանիզմ լիովին չեն օգտագործվում:

<u>8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:</u>

ԵԹԿՊԻ-ում գործող գիտելիքների փոխանցման մեխանիզմներից են «Արտսինեմա» հիմնադրամի և ԵԹԿՊԻ-ի կողմից իրականացվող Բարձրագույն ռեժիսորական կուրսերը, ինչպես նաև նախապատրաստական դասընթացները, որոնք նախատեսված են ՀՀ և օտարերկրյա դիմորդներին 13 մասնագիտությունների գծով պատշաճ մակարդակով ընդունելության քննություններին նախապատրաստելու համար:

Գիտելիքների փոխանցման մեխանիզմներից են նաև Երևանում և ՀՀ-ի մարզերում իրականացվող դասախոսությունները, վարպետության դասերը: ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական, ինչպես նաև ուսանողական կազմի ներկայացուցիչները հրավիրվում են ամենատարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող մշակութային, ստեղծագործական միջոցառումներին, վարպետության դասընթացներին: Նշված գործընթացները կարելի է դիտարկել որպես հասարակությանը գիտելիքների փոխանցման գործընթացներ, սակայն դրանց արդյունավետությունը դեռևս չի ուսումնասիրվում:

Դատողություններ:

Հաշվետվողականության սահմանված կարգ չունենալով հանդերձ բուհում գործում է ներքնից-վերև տարեկան հաշվետվությունների ներկայացման համակարգ, որը ճիշտ գործելու դեպքում կարող է հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմ դառնալ:

Հաշվետվությունները լավ միջոց են բուհի առաքելության և զարգացման հայեցակարգի իրականացումը գնահատելու համար: Սակայն հաշվետվողականության մեխանիզմը լիարժեք չէ և չի գործում ըստ ՌԾ-ի ուղղությունների:

Բուհի կողմից հասարակությանը ԶԼՄ-ներին նյութերի տրամադրումը, սոցիալական ցանցերի կիրառումը զգալիորեն նպաստում է բուհում իրականացվող գորընթացների թափանցիկությանը:

Բուհում առկա են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող գործընթացներ, սակայն ինստիտուցիոնալ առումով դրանք դեռ չեն դարձել հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵԹԿՊԻ-ում գործում են հասարակությանը գիտելիքների փոխանցման որոշ գործընթացներ, սակայն դրանց արդյունավետությունը չի ուսումնասիրվում:

Հասարակական պատասխանատվության ոլորտում որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է:

Եզրակացություն:

Պետությանը և հասարակությանը հաշվետու լինելու նպատակով ԵԹԿՊԻ-ում գործում է ներքևից-վերև տարեկան հաշվետվությունների ներկայացման համակարգ, բուհում իրականացվող գործընթացների հասանելիությունը և թափանցիկությունը ապահովելու համար կիրառվում են տեղեկատվության տարածման մեխանիզմներ, իրականացվում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող և հասարակությանը գիտելիքների փոխանցման որոշ գործընթացներ: Հաշվի առնելով, որ բուհը գիտակցում է գործող համակարգերի, մեխանիզմների և գործընթացների բարելավման անհրաժեշտությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են չափանիշ 8-ի պահանջները:

Եզրահանգում:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի 4-րդ նպատակը ձևակերպված է որպես՝ Ռազմավարական գործակցություն և միջազգային համագործակցություն: Նպատակին հասնելու համար որպես 1-ին խնդիր սահմանված է՝ Համագործակցություն եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական ոլորտներում: Որպես 2-րդ խնդիր սահմանված է՝ Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմի հավաքագրումը և ուսուցման կազմակերպումը: Սակայն նշված խնդիրների ուղղությամբ արդյունքներ և առավել ևս հաջողություններ չեն գրանցվել: Արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականությունը և ընթացակարգերը բացակայում են:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Բուհում գործում է Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոն, որը միտված է ապահովել ԵԹԿՊԻ-ի անդամակցությունն ու համագործակցությունը բազմաթիվ ցանցերի և կազմակերպությունների, ինչպես նաև աշխարհի մի շարք բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ: Սակայն կենտրոնի գործունեությունը լիարժեք կանոնակարգված չէ:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

2010-2015թթ. ուսումնական տարիների ընթացքում ԵԹԿՊԻ-ն հյուրընկալել է օտարերկրյա մասնագետներ՝ Ռոբերտ Ստուրուա, Սերգեյ Սոլովյով, Տոնինո Գուէրա, Արտավազդ Փելեշյան, Աբդոաշիդով, Զանուսի, Ստելինգ, Արմեն Մեդվեդև, Մայքլ Սայմն և այլք, ովքեր վարպետաց դասեր են անցկացրել ուսանողների համար:

2014թ. հոկտեմբերից ԵԹԿՊԻ-ն անդամակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների բարձրագույն կրթական միջազգային ցանցին:

Իրականացվող ուսանողների ու դասախոսների «շարժունությունը» կարճաժամկետ է և հիմնականում ենթադրում է մասնակցություն որոշակի միջոցառմանը: Մինչ դեռ ուսանողների փոխանակումը ենթադրում է առնվազն մեկ կիսամյակի ուսուցում և գործընկեր բուհում ձեռք բերված կրեդիտների ճանաչում, իսկ դասախոսների շարժունությունը ենթադրում է դասավանդում գործընկեր բուհի ուսանողներին

Տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցելու արդյունավետության գնահատման համակարգ չկա:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵԹԿՊԻ-ի ուսանողների կրթական ծրագրերում առկա են օտար լեզվի դասընթացները ՄԿԾ-ների չափորոշիչների համապատասխան: Օտար լեզվի իմացությամբ դասախոսները մեծաքանակ չեն (սա չի վերաբերում ռուսերենի իմացությանը): Նշենք նաև, որ օտարերկրյա դիմորդների մեծամասնությունը սփյուռքի ներկայացուցիչներ են՝ հայերենի իմացությամբ:

Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ բուհը նոր է համաձայնություն ձեռք բերել ԱՄՆ դեսպանատան հետ: Ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի ուսումնասիրություն կատարված չէ:

Դատողություններ:

ԵԹԿՊԻ-ի հիմնական նպատակներից մեկն է՝ միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը, սակայն փորձի փոխանակման, զարգացման, միջազգային ծրագրերին մասնակցության, ուսանողների և դասախոսների շարժունության ուղղությամբ հաջողություններ չեն գրանցվել: Արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականությունը և ընթացակարգերը բացակայում են:

Բուհում գործում է Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը, սակայն նշված խնդիրների ուղղությամբ շոշափելի արդյունքներ չի գրանցել: Միջազգային համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է վարպետաց դասեր կազմակերպելով: Դրական է, որ 2014թ. հոկտեմբերից ԵԹԿՊԻ-ն անդամակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների բարձրագույն կրթական միջազգային ցանցին: Տեղական և միջազգային հաստատությունների հետ համագործակցելու արդյունավետության գնահատման համակարգը բացակայում է:

Միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծման համար կարևորվում է ԵԹԿՊԻ-ի կողմից ֆինանսական ռեսուրսների տրամադրումը ինչպես անձնակազմի, այնպես էլ ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու, դասախոսների և ուսանողների շարժունությունն ակտիվացնելու համար: Միջազգայնացմանն ուղղված ռազմավարական քայլերն ու նախաձեռնությունները հստակ պլանավորման և համակարգման կարիք ունեն:

Եզրակացություն:

Հաշվի առնելով, որ արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականությունը և ընթացակարգերը բացակայում են, միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը խիստ թերի է, արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքների գնահատում չի իրականացվում, թույլ են գործում դասախոսների և ուսանողների շարժունության ապահովման մեխանիզմները, իսկ նրանց օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելուն միտված դասընթացները նոր է նախատեսվում ներդնել, փորձագիտական խումբը գտնում է, որ մուհը չափանիշ 9-ի պահանջները չի բավարարում:

Եզրահանգում:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

<u>10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:</u>

Որակի ապահովման համակարգի ստեղծումը ներառնված է ԵԹԿՊԻ ռազմավարական ծրագրում: 29.08.2014թ. հաստատվել է Որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը: Որակի ապահովման քաղաքականությունը հստակ չէ: Ռազմավարական նպատակներին հասնելու համար նախատեսված գործողությունները սահմանափակվում են այս կամ այն խնդրի ուսումնասիրությամբ կամ գնահատմամբ: Բացակայում է ռազմավարության իրականացման ժամանակացույցը և պատասխանատուները:

2015թ. հրապարակվել է բուհի որակի ապահովման համակարգի ուղեցույցը, որում ներկայացված է ՈԱԿ-ը, դրա հիմնական խնդիրները, գործառույթների, գործունեության հիմնական ուղիները, իրավունքներն ու պարտականությունները, որակի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղիները, ՈԱ փաստաթղթերը, ՈԱԿ կառուցվածքը, ՈԱ համակարգի խորհուրդը:

Ուղեցույցը ներառում է նաև «ԵԹԿՊԻ-ի որակի ներքին ապահովման քաղաքականություն և ռազմավարություն», «ՄԿԾ-ների մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում» և «ԵԹԿՊԻ-ի ուսանողների գիտելիքների

ստուգման և գնահատման կարգ» փաստաթղթերը: ՈՒղեցույցում ներկայացված չեն որակի ապահովման ընթացակարգերը, ՈԱԿ խնդիրների և գործողությունների իրականացման մեթոդները, մեխանիզմները և գործիքակազմը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի կենտրոնի անձնակազմը բաղկացած է՝ կենտրոնի ղեկավարից և մեկ աշխատակցից: Բուհը տրամադրել է ՈԱԿ-ին նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Բուհի նյութական ռեսուրսների հարստացման հարցում մեծապես նպաստել է Համաշխարհային Բանկի տրամադրած «Կրթության որակ և համապատասխանություն» «Որակի ապահովման ներքին համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագիրը: ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնը տեղակայվում է նորոգված և բոլոր անհրաժեշտ գրասենյակային պարագաներով և տեխնիկայով ապահովված սենյակում:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Ներքին և արտաքին շահակիցները բավարար չափով ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: Շահակիցների մասնակցությունը սահմանափակվում է միայն տարբեր հարցումներում նրանց մասնակցությամբ: ԵԹԿՊԻ-ի որակի կենտրոնը որոշակի հարցումներ է իրականացնում բուհի ուսանողների և դասախոսների շրջանում: Հաշվի առնելով, որ բուհում դասավանդում են նաև արտաքին շահակից հաստատությունների հիմնական աշխատակիցներ կարելի է համարել, որ ներքին և արտաքին շահակիցների մի մասը ներգրավված է բուհի կողմից կազմակերպվող հարցումներում: Բուհում իրականացվող գործընթացների գնահատման մեխանիզմները և գործիքները բացակայում են:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Բուհում իրականացվող բազմաթիվ գործընթացների գնահատման համար մեխանիզմների ու գործիքների մշակումը ավարտված չէ: Որոշ գործիքներ փորձարկվել և այժմ վերանայվում են: Ինքնավերլուծության մեջ նշված է, որ բուհի «Որակի ապահովման կառույցը ստեղծվել է 2011թ. և դեռ շատ երիտասարդ է, գտնում ենք, որ դեռ շուտ է խոսել համակարգի վերանայման մասին»: Սակայն 5 տարին բավական ժամանակամիջոց է ՈԱ համակարգ մշակելու և ներդնելու համար:

10.5 Որակի ապահովման ներքին հաակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Որակի ապահովման ներքին համակարգը ջանքեր է գործադրում ապահովելու բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցները ներգրավված են եղել ԵԹԿՊԻ-ի ինքնագնահատման զեկույցը պատրաստող բոլոր խմբերում: Սակայն որակի ապահովման համակարգի ոչ լիարժեք լինելու արդյունքում ինքնագնահատումը հաճախ հիմնված չէ լուրջ ուսումնասիրությունների կամ այլ հիմքերի վրա: Որակի ապահովման արտաքին

գնահատման համար Որակի ապահովման համակարգի ստեղծած հիմքերը դեռևս բավարար չեն:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակի ապահովման ներքին համակարգը ձևավորման փուլում է: Կատարվում են որոշ հարցումներ, սակայն դրանք չեն ծածկում բուհի գործունեության բոլոր ուղղությունները: Որակի ապահովման ներքին համակարգը ԵԹԿՊԻ-ի գործունեության որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն չի տրամադրում և չի ապահովում բուհի գործունեության թափանցիկությունը:

Դատողություններ:

ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է դեռևս 2011 թվականին, բայց որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Որակի ապահովման քաղաքականությունը հստակ ձևակերպված չէ, սահմանված չեն ներքին որակի ապահովման ընթացակարգերը: Բուհի նյութական և ֆինանսական ռեսուրսները արդյունավետ օգտագործելու դեպքում բավարար են ՈԱ գործընթացները կառավարելու համար: Կենտրոնը ներկայումս ինստիտուտի թույլ օղակն է և վերակազմակերպման կարիք ունի, հատկապես մարդկային ռեսուրսների տեսանկյունից: Կենտրոնի աշխատակիցները մասնագիտական վերապատրաստման կարիք ունեն:

ԵԹԿՊԻ-ի ներքին և արտաքին շահակիցները բավարար չափով չեն մասնակցում որակի ապահովման գործընթացներին և նրանց ներգրավումը սահմանափակվում է բուհի կողմից կազմակերպվող հարցումներով, որոնք ըստ էության, վեր չեն հանում առանցքային հիմնախնդիրները: Իրականացվող բազմաթիվ գործընթացների գնահատման համար մեխանիզմներ ու գործիքներ չկան: Որակի ապահովման համակարգը սակավ հիմքեր է ստեղծում որակի ապահովման արտաքին գնահատման համար: Ակնհայտ է, որ որակի մշակույթը դեռևս ձևավորված չէ, իսկ ՊԻԳԲ շրջափուլը լիարժեք չի գործում: Որակի ապահովման ներքին համակարգը ԵԹԿՊԻ-ի գործունեության որակի վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն չի տրամադրում և չի ապահովում բուհի գործունեության թափանցիկությունը:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չափանիշ 10-ի պահանջները չի բավարարում, քանի որ, ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման ներքին համակարգը՝ գործընթացները, մեխանիզմները և գործիքները գտնվում են ձևավորման փուլում և հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը չեն նպաստում:

Եզրահանգում:

Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	*ՈՐՈՇՈՒՄ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Փոնձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մկրտիչ Այվազյան - 2000թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 2003թ. ստացել է Ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2009-2013թթ. աշխատել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում որպես Մշակումների և զարգացման բաժնի մասնագետ, Քարտուղարության ղեկավար, Ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար: 2012թ. մինչ օրս Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում նախ որպես ուսումնական վարչության պետ, այնուհետև՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր: Բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ:

Լևան Խեթագուրի – 1986 թ. ավարտել է Վրաստանի պետական թատրոնի ինստիտուտը, 1991թ.՝ Մոսկվայի ГИТИС բարձրագույն դպրոցը, թատերագիտության թեկնածու, Կովկասյան բազային հիմնադրամի նախագահ, 1989-ից Վրաստանի հեռուստատեսության և թատրոնի պրոդյուսեր, և համապրոդյուսեր մի շարք երկրների հեռուստատեսությունների և թատրոնների: 1997-ից բազմաթիվ մշակութային նախագծերի և փառատոնների, սեմինարների համակարգող և մոդերատոր: 1999 թ.-ից մի շարք երկրների համալսարանների պրոֆեսոր, փորձագետ, խորհրդատու: 2010-2015 թթ. Իլյահի պետական համալսարանի Արվեստների հետազոտության ինստիտուտի տնօրեն: Արվեստագիտության ոլորտի մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, միջազգային փորձագետ:

Յուրի Մգեբրիշվիլի – 1979 թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի կիբեռնետիկայի, կիրառական մաթեմատիկայի և արվեստագիտության ֆակուլտետը: Մշակույթի կառավարման ծրագրերի մագիստրոս, Իլյահի պետական համալսարանի պրոֆեսոր, գիտ. թեկ. մշակույթի կառավարման ոլորտում, փորձագիտական խմբի անդամ, միջազգային փորձագետ, Վրաստան: Արվեստների հետազոտական ինստիտուտի Մշակույթի կառավարման և մշակույթի քաղաքականության հետազոտական կենտրոնի ղեկավար: Բազմաթիվ գիտական հետազոտությունների հեղինակ:

Գեղեցիկ Գրիգորյան – 1979թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակ-ը, իրավ. գիտ. թեկ. է, դոցենտ: Սկսած 1998 թ. -ից ՀՀ-ում և արտերկրում /Հունգարիա, ՌԴ, Ղազախստան, ԱՄՆ՝ Բերկլիի և Հաստինգսի համալսարաններ/ վերապատրաստվել է մարդու իրավունքների, գենդերային հիմնախնդիրների, կրթության որակի բարելավման ծրագրերով, մասնակցել է մի շարք միջազգային սեմինարների և գիտաժողովների: Վերոնշյալ հիմնախնդիրներով 1997թվականից տեղական և միջազգային մի շարք կառույցների, իսկ 2013թ. -ից «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագետ է: Մի շարք դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և հոդվածների հեղինակ է: Աշխատում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում, համատեղությամբ՝ «Հայբուսակ» համալսարանի իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանն է:

Միշա Թադևոսյան - Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող: 2015թ.-ից ՀՊՄՀ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության(ՈՒԳԸ) նախագահ: Անցել մի շարք վերապատրաստումներ. *«Որակի ապահովում»*, «Շոտլանդիայում ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում» (sparqs), *«Культурно-историческая психология и деятельностный подход в образовании»* Մոսկվայի հոգեբանկամանավարժական համալսարանում (МГППУ), Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթաց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում (ՈԱԱԿ)

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

16.05 – 20.05.2016

	16.05.2016թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:15	9:45	30 րոպե
2	Հանդիպում ռեկտորի հետ	10:00	10:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խմբի հետ	10:30	11:45	75 րոպե
4	Հանդիպում պրոռեկտորների հետ	11:45	12:45	60 րոպե
5	Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)	12:45	13:45	60 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում /գրադարան, ֆիլմադարան, լաբորատորիաներ, դիպլոմային աշխատանքների պաշտպանություն/	14:00	15:00	60 րոպե
7	Հանդիպում դեկանների և ուսումնական գործընթացի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների հետ	15.15	16:15	60 րոպե
8	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	16:30	17:30	60 րոպե
9	Փորձագիտական խմբի քննարկումներ	17:30	18:45	75 րոպե

	17.05.2016 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:30	10:00	30 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:00	11:30	90 րոպե
3	Հանդիպում դասախոսների հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)	12:45	13:45	60 րոպե
5	Ռեսուրսների դիտարկում /Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոն, Անձնակազմի հաշվառման բաժին, SS և PR կենտրոն, ամբիոններ, դասալսումներ/	14:00	15:45	105 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	16:00	17:00	60 րոպե
7	Փորձագիտական խմբի քննարկումներ	17:00	18:15	75 րոպե

	18.05.2016 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:30	10:00	30 րոպե
	Հանդիպում որակի ապահովման կենտրոնի հետ	10:00	11:00	60 րոպե
2	Հանդիպում ուսանողական խորհրդի և կինոյի ակումբի ներկայացուցիչների հետ	11:15	12:00	45 րոպե
3	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ /տեղացի և արտասահմանցի/	12:10	13:30	80 րոպե
4	Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ	14:45	15:45	60 րոպե
6	Հանդիպում հեռակա ուսուցման ուսանողների հետ	16:00	17:00	60 րոպե
7	Փորձագիտական խմբի քննարկումներ	17:00	18:30	90 րոպե

Այցելություն Գյումրու մասնաճյուղ

	19.05.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի մեկնումը Գյումրի	8:30	10:30	120 րոպե
2	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ	10:45	11:00	15 րոպե
3	Հանդիպում վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների հետ	11:15	12:15	60 րոպե
4	Հանդիպում Ուսխորհրդի և ուսանողության ներկայացուցիչների հետ	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)	13:30	14:30	60 րոպե
6	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	14:45	15:45	60 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում	16:00	17:00	60 րոպե
8	Փորձագիտական խմբի քննարկումներ	17:00	17:45	45 րոպե
9	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ	17:45	18:00	15 րոպե
10	Մեկնում Գյումրիից	18:00	20:00	120 րոպե

	20.05.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:00	9:30	30 րոպե
2	Հանդիպում Գիտ. քարտուղարի, Գիտական մասի աշխատակիցների հետ	9:30	10:30	60 րոպե
3	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	10:45	11:30	45 րոպե
4	Ռեսուրսների դիտարկում / փաստաթղթերի ուսումնասիրություն, քննարկումներ/	11:30	12:30	60 րոպե
5	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:30	13:00	30 րոպե
6	Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)	13:00	14:00	60 րոպե
7	Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ	14:15	15:00	45 րոպե
8	Փորձագիտական խմբի քննարկումներ	15:15	16:15	60 րոպե
9	Հանդիպում ռեկտորի հետ	16:15	17:00	45 րոպե
10	Փորձագիտական խմբի ամփոփիչ քննարկումներ	17:15	19:00	75 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱ ՆԻՇ
1.	ԵԹԿՊԻ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն	1-10
2.	ԵԹԿՊԻ կանոնադրություն /1	1-10
3.	ԵԹԿՊԻ_Ռազմավարական ծրագիր_2013-2017թթ.	1-10
4.	ՌԾ-ի ժամանակացույց,	1-10
5.	Ռեկտորատի կանոնակարգ	2
6.	ԵԹԿՊԻ խորհրդի աշխատակարգ	2
7.	ԵԹԿՊԻ Գիտխորհրդի կանոնակարգ	2
8.	ԵԹԿՊԻ կոլեկտիվ պայմանագիր	2
9.	ԵԹԿՊԻ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն	2
10.	Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգ	2
11.	ԵԹԿՊԻ Մեթոդական խորհրդի կանոնակարգ	2,3,5
12.	ԵԹԿՊԻ ամբիոնի կանոնադրություն	2
13.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ	2,8
14.	Օպերատորություն ՄԿԾ	3
15.	Թատերագիտություն ՄԿԾ	3
16.	Ծրագրի մասնագիր/սպեցիֆիկացիա/	3
17.	Առարկայի նկարագիր	3
18.	ԵԹԿՊԻ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ	2,3,4
19.	ԵԹԿՊԻ ուսանողների մասնագիտացումների տեղափոխությունների կանոնակարգ	2,4
20.	<<ՄԿԾ-ների մշակում, հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում>>	3
21.	ԵԹԿՊԻ 2015թ.մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ	4
22.	ԵԹԿՊԻ-ի բակալավրի կրթական ծրագրով օտարերկրյա դիմորդների ընդունելության պահանջները	4, 9
23.	ԵԹԿՊԻ Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի կանոնադրություն	4
24.	ԵԹԿՊԻ Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի ռազմավարական ծրագիր2013-2017թթ	2,4
25.	ԵԹԿՊԻ ուսանողների ներքին կարգապահական կանոններ	4
26.	ԵԹԿՊԻ ուսանողական խորհրդի կանոնադրություն	4
27.	Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ	2,5
28.	Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների	5
29.	ԵԹԿՊԻ կինոտեխնիկայի և սարքավորումների տրամադրման և օգտագործման կանոնակարգ	7
30.	Ուսանողական թատրոն լաբորատորիայի կանոնադրություն	4,7
31.	Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ	10
32.	ՈԱԿ-ի ռազմավարություն10	1,2
33.	ՈԱԿ հաշվետվություն 2015թ	8, 10
34.	2013-2014թթ. ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և վարչական աշխատակազմի շրջանում անցկացված հարցումների հիմքեր և վերլուծություն	4,5,10
35.	Գիտական խորհրդի տարեկան պլաններ	6
36.	Հանդես գիտամեթոդական ժողովածուի հրապարակվող հետազոտություններին ներկայացվող տեղեկիկական և այլ չափանիշների հայեցակարգ	6
37.	Վերջին 5 տարում ԵԹԿՊԻ-ի ներուժի և արտասահմանյան բուհերի առաջատար մասնագետների մասնակցությամբ, գիտական և մեթոդական քննարկումների, սեմինարների, գիտաժողովների, փառատոների, ստեղծագործական մրցույթների ցուցակը:	5

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսումնամեթոդական վարչություն
2. Դեկանատներ
3. Ամբիոններ
4. Ուսանողական թատրոն-լաբորատորիա
5. Մեներգի կաբինետներ
6. Որակի ապահովման կենտրոն
7. Կարիերայի և պրակտիկայի կենտրոն
8. Գրադարան, ընթերցասրահ
9. Բուժկետ
10. Ֆիլմադարան
11. Գյումրու մասնաճյուղ
12. Երկու կինոդահլիճ
13. Պարային սրահները. կաբինետներ
14. Տեսամոնտաժային և ձայնամոնտաժային, մուլտ տաղավարներ
15. Մասնագիտական լսարաններ

Փորձագիտական խումբի անդամները դիտել են.

1. Դերասանական բաժնի ավարտական կուրսի ներկայացումը:
2. Գյումրիի մասնաճյուղի Դերասանական բաժնի ավարտական կուրսի ներկայացումը:
3. Գյումրիի մասնաճյուղի Դերասանական բաժնի առաջին կուրսի ներկայացումը:
4. Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ավարտական կուրսերի ուսանողների մի շարք աշխատանքներ.

2014-2015 ուս. տարվա ավարտական կուրս

«Ճանապարհ» /30 րոպե/ Ա.Բաղդասարյան - Կինոարվեստ/ խաղ. ֆիլմ. ռեժ./
«Աղջիկը լուսնի վրա»/20 րոպե/ Ա.Մալաքյան – Կինոարվեստ/ խաղ. ֆիլմ. ռեժ./

2015-2016 ուս. տարվա ավարտական կուրս

«Շնչառություն»/18 րոպե/ Ք.Համբարձումյան - Կինոարվեստ/ խաղ. ֆիլմ. ռեժ./
«Դաղար» / 16րոպե/ Գ.Ղուկասյան - Կինոարվեստ/ խաղ. ֆիլմ. ռեժ./
«Հովվերգություն» / 10րոպե/ Ռ.Փաշինյան – Օպերատորություն
«Պորտրետ» / 10 րոպե/ Ն.Ղազարյան – Օպերատորություն
Էքսպեդիցիա / 3.5 րոպե/ Գ.Խաչատրյան – Գեղանկարչություն/ մուլտնկարչություն/

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԵԹԿՊԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԲՈՒՀ -Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԹԿՊԻ - Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
ԶԼՄ - Զանգվածային լրատվամիջոց
ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱԿ - Որակի ապահովման կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՊԴ – Պրոֆեսորադասախոսական
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՈՒԱ – Ուսումնառության արդյունք
ՍՏՈՒԿ - Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն
ԾԻԳ – Ծրագրերի իրականացման գրասենյակ
ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
PR- Public relation – հասարակության հետ կապեր
SWOT- Strengths, Weaknesses, Opportunities, Threats - ուժեղ, թույլ կողմեր, հնարավորություններ, ռիսկեր
KPI - key performance indicator- կատարողականի առանցքային ցուցիչներ
ГИТИС - Российский институт театрального искусства
ВГИК - Всероссийский государственный институт кинематографии имени С.А. Герасимова